Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ

ՏՈՒԵԼՈՅ

Դ ՄԻՐՍՅԷԼ, Դ ՄԵՍՐՈՎՊ, Դ ԽՈՐԷՆ ԵՒ Դ ՆԵՐՍԷՍ

ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ՎԱՆԻՑ ԱՐՄԱՏՈՒ

ԱՌ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՅ

ԵՒ

ԱՐԴԱՐԱԽՈՀ ԱՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. ԹՕԶԼԵԱՆՑ

—

)(1873)(

ԳԻՆ. ԳՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՐՔ ԵՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՏԵԱՐՔ

ԱՆԴԱՄՔ ԱԶԳԱՅԻՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՑ։

7450 ю. Ա.

Կյիշէք անշուշտ՝ որ 1872 մարտ 18 ամսաթուով Սրբազան վանուց Միքայէլ, Մեսրոպ, Խորէն և Ներսէս վարդապետաց ստորագրութեամբ թուղթ մը հրատարակուեցաւ Կեդրոնական Վարչութեան արդարախոհ ատենիդ ուղղեալ։ Այն թուղթը, որ Ստեփան և Յակոբ վարդապետաց և մեր առ Նիկոմիդիոյ Քաղաքական Ժողովը մատուցած՝ և անկէ ալ Կեդրոնական Վարչութեան նախորդ Քաղաքական Ժողովոյ ուղղուած բողոքագրոյն ցրումն ըլալու նպատակաւ գրուած էր, դժբաղդաբար գրողներուն այս նպատակին ծառայելու անյարմար ըլլալէ զատ՝ ճշմարտութեան յայտնութենէ նեղն ինկողներու սովորական եղած թշնամանաց, լուտանաց և զրպարտութեանց դժպատեհ բովանդակութիւն մին էր, և ազգային պատկառելի Վարչութիւնը կրցաւ ան ատեն քաջ հասու լինել՝ թէ կամ աս չորս վարդապետաներն ուրիշի դատին միջամտելու պատեհ ժամանակը և կերպը դիտնալու օրինաւորութիւնը և անկողմնակալ բարք չունին, որ համարձակեցան առանց դատող ժողովէն հրաւիրուելու ինքնադիմաբար և յանդէպ ժամու մեր դատին մէջ նետուիլ իրենց թղթոյն միջոցաւ 'ի մեծարանս երեսաց Վանահօր, և կամ Վանահայրը մեր բողոքագրոյն պարունակած ճշմարտութիւններէն յանհնարինս մանելով՝

օգնութիւն՝ օգնութիւն աղաղակեր էր. այդ վարդապետներուն, և անոնցմով մեր դէմ ամբաստաններ և ոսոխներ յարուցանելով խնդիրն այլայլել, և ինքը ասպարէզեն խոյս տալ կուզէր։ Երկուքին ոչն ալ ըլլայ, թղթոյն պարունակութեան վրայ ընթերցողաց դատաստանը չորս վարդապետաց նպաստաւոր չկրնար ըլլալ։

Ցիշեալ վարդապետք իրենց տետրակին յառաջաբանին մէջ ծանուցանելով թէ մեր բողոքներուն դէմ լռող չեն, անտարբեր չեն, երկչոտ ալ չեն, այլ մանաւանդ ճշմարտութեան և արդարութեան համամիտ ծառայներ են, կ՚յայտնեն ապացուցանել ասոնք մեր բողոքներուն պատասխանելով՝ առանց ըստ ան վարդապետներու ընթերցելն անցնելու։ Ահա խոստում մը՝ որ չորս վարդապետաց նպատակը կը յայտնէ մեր բողոքները ճշմարտութեամբ և արդարութեամբ ցրելու համար։ Կոստանան նաև՝ որ աս գործը գլուխ հանելու համար անհամեստ ոճոյ հետևելով թշնամանք չընեն։ Ահա իրենց թղթոյն մէջ բռնելիք սճերնին ալ։

Սակայն թող ներեն մեզ ըսել մեր հոգևոր Հայրերը և Եղբայրները, որ աս երկու օրինաւոր խոստումներն թղթոյ առաջին տողերուն մէջ մոռցեր էին, և ամբողջ տետրակին պարունակութեան մէջ արդարանքն և ճշմարտանքն համամիտ ծառայներու հետքն անգամ չէին երևցներ։ Նպատակներն մոռցեր էին, որովհետև մեր բողոքոյն տակ ինկած խնդիրներուն պատասխանելու խոստումէն յանկարծ մեր կենսագրութեան անցնելով անհեթեթ զրպարտութիւններով, ստայօդ ամբաստանութիւններով, դիպաց խեղաթիւր մեկնութիւններով, և անհիմն կարծեաց և այլայլեալ իրողութեանց յառաջերութիւններով լցուցեր էին տետրակին։

Անհամեստ ոճոյ չհետևելու և թշնամանք չընելու խոստումներն ալ մոռցեր էին, որովհետև տետրակին շատ տեղերէն նախատանաց և թշնամանաց ժահր մը կը բուրէր՝ մէկիս կամ միւսիս համար գործածուած ըլլալով անոր մէջ՝ անբանական, կարծանոր, անշարի, որոմաբանական խելագար, հնոցի, ռամիկ,

ինքնագործ ռամիկ և այլն, գռեհիկ և սինվիքոր մարդկան յատուկ եղած անհամեստ և թշնամական մակդիրները, թուղթը զրպարտութիւնները և իրողութեանց սրուած այլընդայլոյ գոյները, որ ինքնին համեստութեան, արդարութեան և ճշմարտութեան համամիտ ծառայներու գործ չեն։ Թուղթը ստորագրող վարդապետք աս հեղինակը Լաբանէն սորված ըլլալու են, որ Հռաքելը խոստանալով Լիան տուաւ Յակոբայ։

Սակայն աս ալ կրնայ երբև իրաւացի խնդիր հասարակաց հետաքրքրութեան նիւթ ըլլալ՝ թէ ինչու՞ վարդապետաց աս թղթոյն դէմ մեր պատասխանը՝ ի կենդանութեան Գէորգ եպիսկոպոսի և անոր վախճանէն ետքն ալ այսչափ երկար ատեն չհրատարակեցինք։ Հասարակութեան աս իրաւացի հետաքրքրութիւնը գոհ ընելու համար կպատասխանենք, թէ աս յապաղման պատճառը ակամայ էր մեզ համար։ Արդէն թղթոյ հրատարակութենէն անմիջապէս ետքը հոգելոյս Ստեփանոս վարդապետ բաւական ընդարձակ պատասխան մը պատրաստեր էր անոր՝ ուղղեալ՝ ի դէմս չորս վարդապետաց, որովհետև մեր պատասխանը թէ՝ ի կենդանութեան Գէորգ եպիսկոպոսի հրատարակուէր և թէ յետ վախճանի նորին, միշտ վերը յիշուած չորս վարդապետաց ուղղեալ սիտի ըլլար՝ անոնց թուղթը առիթ առնելով մեզ, ինչպէս որ անոնք ալ մեր բողոքագիրը առիթ առնելով իրենց թուղթը հրատարակեր էին։ Սակայն ցաւօք սրտի հարկադրուած ենք յայտնել՝ որ տպագրութեան ծախուց անբաւականութիւններս խոչընդոտն եղեր էր մեզ շուտով տպագրութեամբ՝ ի լոյս ընծայելու գործն, վասն զի մենք ալ չորս վարդապետներուն պէս Արմաշու վանքի տպարան մը մեր անմիջական տնօրէնութեան ներքև առնելու պատրաստ չունէինք, որ անոնց պէս մեր անձնականին վերաբերեալ հրատարակութիւններն անգամ վանուց ծախիւք առ օրին տպելու կարող ըլլայինք, և մինչդեռ փութոյ պնդութեամբ ուսեալ էինք այս մասին դիւրութիւն մը ձեռք ձգելու, և

ահա քանի մը ամիսէն ետքը Գէորգ եպիսկոպոս, և անկէ ամիս ու կէս ետքն ալ Ստեփանոս վարդապետ իրենց մահկանացու կեանքը տարաժամ կնքեցին, պատրաստուած պատասխանն ալ Ստեփանոս վարդապետի հօրը քով 'ի պահեստի մնաց։ Անկէ ետև ալ մեր փոխանորդական պաշտման անխուսափելի պարտքերը և անձնական տկարութիւնք մեծապէս խոչ և խոթ եղան տեսակեալ փութով հրատարակման։ Սակայն այս ցաւալի մահերուն և յականայս մեղծադած խոչընդոտներուն հակառակ՝ մենք ալ, ըստ որում չորս վարդապետներուն պէս իրենց թղթոյն դէմ լռող, երկչոտ և անտարբեր ըլլալու պատճառ մը չունեցող, Ձեր բարձր ներողամտութիւնը կանխաւ խնդրելով, Սրբազան Տէր, և Հարք, և Տեարք, մեր պատասխանոյն այսչափ երկարատև յապաղման համար, ներկայիս կուգանք մեր բնական պաշտպանութեան իրաւունքը 'ի գործ դնել 'ի թշնամանս մեր անձին դրդռեալ անարժան յարձակման մը դէմ, նպատակնիս ան չըլլալով ինչ որ վարդապետներուն եղած է, այսինքն ինքզինքնիս պաշտպանելու համար անոնց վանքին մէջ վարած միաբանական կեանքը և քիչ ու պատահարար ունեցած յօժարութիւնները գործոյս մէջ ոճով ստորագրել. կրնայինք արդարև ասալ ընել, մանաւանդ թէ տեղ տեղ խօսքին կարգը ինքնին պատշաճապէս նոյնը կրպահանջէր ալ, բայց դիտմամբ զանց ըրինք, մանաւանդ թէ զանց ընել տուաւ մեզի աստուածայինն Պօղոսի սա կչտամբանքը, թէ «դու ո՞վ ես, որ դատես զայլոյ ծառայ, իւրում տեառն կայ կամ անկանի*»։ այնպէս որ մեր այս պատասխանոյ դիրը ոչ թէ յարձակողական, այլ պաշտպանողական պիտի ըլլայ, ան ալ միայն մեր անձին նկատմամբ թղթոյ մէջ հրատարակուած անհիմնութեան ստութեանց և սև զրպարտանաց դէմ. որովհետև Ստեփան և Յակոբ վարդապետաց վրայ գրուածներն ալ հերքելու համար պէտք եղած ապա-

* Հռովմ. ԺԴ. 4.

ցոյցները ծանօթ չէին մեզի, թէ և այս ալ ստոյգ է՝ որ հոգելոյս Ստեփան վարդապետ իր վրայ թղթոյ մէջ հրատարակուածներէն կարեւորութիւն տուելու մասերուն պատասխան դրած էր իւր վերը յիշուած աշխատասիրութեան մէջ, որոյ անուն կոչած էր «յայտարարութիւն վեցամեայ անցից Արմաշու վանից»։

Մեր առաջադիր նպատակը 'ի գլուխ հանելու համար՝ գործոյս առաջին գլխոյն մէջ պիտի դնենք թղթոյ մէջ 'ի մասնաւորի մեր անձին դէմ գրուած իրողութեանց ստոյգ պատմութիւնը. երկրորդ գլուխը Ստեփան և Յակոբ վարդապետաց և մեր միաբանական բողոքներուն պատմութիւնը պիտի կրէ. երրորդին մէջ Ներսէս և Գէորգ եպիսկոպոսաց թղթակցութեանց առթիւ չորս վարդապետաց ցաւոյն առարկայ եղած մէկ կողմին վրայ մեր դիտողութիւնը պիտի յայտնենք. չորրորդն ալ բովանդակութիւն կամ եզրակացութիւն պիտի ըլլայ նախորդ երեք գլխոց մէջ գրուածներուն։

Անհամեստ ոճոյ չհետևելու և թշնամանք չընելու մասին՝ աւելի կընտրենք առանց խոստանալու նոյնը արդեամբք մեր բովանդակ գործոյն ընթացքին մէջ երևցընել, քան թէ թուղթը ստորագրող չորս վարդապետներուն պէս ինչ-ինչ+ պէտ չընե+ ըսել, և ապա իրօք անոր ներհակն ընելով՝ համեստութեան և անհամեստութեան դաղափարներն ընթերցողաց մտքին մէջ շփոթել։

Ա.

ԹՂԹՈՅ ՄԷՋ ՄԵՐ ԱՆՁԻՆ

ԴԷՄ ԳՐՈՒԱԾ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՍՏՈՅԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1868 ին, Օգոստոս ամսոյ մէջ հոդելոյս Գէորգ եպիսկոպոս իր նախորդ վանահօր Եփրեմ վարդապետին յաջորդելով յաթոռ վանահայրութեան վանուց, վեց ամիս ետքը 1869 տարւոյ սկիզբներն ալ Էջմիածին դնաց եպիսկոպոսական բարձր աստիճանը ընդունելու համար։ Հանդուցեալ վանահօր աս երկու վանահայրական և եպիսկոպոսական պատուոյ համբարձումը մէկ մէկ հնարադիտութեան պարտական է եր յաջողութիւնը. վանահայրական պատուոյ բարձրացումը յաջողեցաւ վանքի միաբաններէն Գէորգ սարկաւագը իր ապաշխարանաց կապանքէն քակելով և վանահօր ընտրութեան համար քուէ տալու մասնակից ընելով. եպիսկոպոսական աստիճանի հասնիլն ալ յաջողեցաւ իր այն բացայայտ եւ հրապարակական խոստմամբը՝ որով պայման դրաւ միաբանութեան հետ իւր եպիսկոպոսական ծախքը իր անձնական քսակէն հոդալ և վանքին մնաուկէն չպահանջել մինչև ցընդարձակութիւն կարողութեան վանաց։ Առաջինը նիւթուեցաւ վանական ընդհանուր ժողովոյ մէջ Գէորգ եպիսկոպոսի և իր կուսակից քանի մը վարդապետաց հնարիւք, որք Գէորգ վարդապետը վանահայր ընտրելու համար պէտք եղած քուէն շատցընելու մտօք, ըստ որում միաբանից մէկ մասը այն ընտրութեան մէջ իրենց համամիտ չէին տեսներ, Գէորգ վարդապետի իրենց հետ ձայնակցութենէ բաղկացած մեծամասնութեամբ որոշեցին՝ որ Գէորգ սարկաւագը

իր ապաշխարհանքէն լուծուելով կարող ըլլայ միաբանական իրաւանց մասնակցիլ և վանահօր ընտրութեան համար քուէ տալ. որովհետև աս սարկաւագին ան ատենուան տրամադրութեան նայելով աղէկ գիտէին՝ որ Գէորգ վարդապետին պիտի տար իր քուէն, ինչպէս որ իրօք ալ այնպէս եղաւ. աս կերպով յաջողեցան բոլոր միաբանից քուէները Գէորգ վարդապետին վրայ դարձընել* միայն թէ մէք վերոյիշեալ որոշումը, ինչպէս թուղթն ալ կըսէ յեր. 36. խորհրդաւոր անուանելով ստորագրեցինք։ Եւ յիրաւի՛, ապաշխարհանք մը՝ որոյ կանոնական պայմանաժամը դեռ լրացած չէր, որոյ ենթակայն դրաւոր կամ բերանացի խնդիր մը ըրած չէր ժողովոյն իւր կապանքէն լուծուելու համար, և որոյ ինչպէս որոշումը Տնօրէն ժողովն ըրած էր, արձակուրդն ալ նոյն ժողովոյն կպատկանէր, այսպիսի պարագայներով արձակուած

*. Թուղթը ստորագրող վարդապետք աս քուէարկութեան ատեն Պօղոս Պատրիարքի տրուած մէկ քուէն իրենց թղթոյն մէջ մեզի վերագրելով կըսեն թէ« աս ընելէն առաջ պարտական էր նորին Սրբազնութենէն ստորագրութեամբ հաճութիւն առնել մեր կանոնաց յօդուածներուն և միաբանական ուխտին կապերուն - . . ոչ միայն այսպէս չէր ըրած, այլ նաև Նորին Սրբազնութեան երեսն անգամ չէր տեսած մինչև նոյն օրը, և շատ ետքն ալ։ Զենք գիտեր՝ թէ ո՞ւրկէց կառնեն վարդապետք Պօղոս Պատրիարքին համար քուէ տուողին այս պարտականութիւնը, և մեր մինչև ան ատեն անոր երեսն անգամ տեսած չըլլալը։ Պօղոս Սրբազան թէ երեսօք և թէ իր գործքերովը անկէ շատ առաջ ծանօթ էր մեզի. մէկալ ըսած նախահոգակ պայմաններն ալ առանձնարգաց և մինչև անգամ Պատրիարգաց ընտրութեան ատեն 'ի գործադրութեան չէ ընտրութենէն առաջ։ Միթէ Գէորգ եպիսկոպոս, որ աս տողերը վարդապետաց գրել թելադրեր է, վեց եօթը տարի առաջ Գերապատիւ Ներսէս Սրբազանի վանուց վանահայրութիւն առաջարկած ատենը, թ՛ուղթ. եր. 62. յորում ժամանակի վանքը իր առանձին վանահայրը և ներկայ կանոնաց դոնէ սկզբունքն ունէր, Նորին Սրբազնութենէն նախապէս ստորագրութիւն առնո՞ր էր վանական կանոնաց հաճ և հաւան ըլլալուն։ Ուրեմն չենք հասկնար՝ թէ ի՞նչպէս անոր համար օրինաւոր և խոհական եղածը ուրիշին վրայ իրը անխորհուրդ ձեռներեցութիւն կնկատեն չորս վարդապետք։

ռապաշխարհանք մը Խորհրդոյ չէր ըլլար նէ՝ ուրիշ ի՞նչ կրնար։ Զորս վարդապետք, որ մեր աս Խորհրդոյ յորջորջումը կարճմտութենէ կամ անբարեմտութենէ * առաջ եկած կհամարին, և իրենց ըրածն ալ եղբայրական Ներողամտութեան կանոնէն, ինչու՞ ուրեմն արդի վանահօր ընտրութեան ատենն ալ նոյն եղբայրական լայնամիտ և բարեմիտ ներողամտութիւնը առաւել ևս չփայլեցուցին այն իրենց դարձեալ մեղուցեալ կարծած եղբօր դէմ՝ վանահօր ընտրութեան մասնակցելու համար Ս.տափաղարէն կանչելով զայն, ուր տարի ու կէսէ 'ի վեր կդտնուէր նա միաբանական իրաւանց մասնակցութենէ բաժանեալ դրից մէջ, և հոգելոյս Վանահօր կենդանութեան ատենն ալ յատկապէս վանք դիմած էր հաշտութեան համար։ Պատճառն յայտնի է, որովհետև վերջին ընտրութեան ատեն առաջուան պէս հակառակ քուէարկուաց կասկած չկենալով՝ ա՛լ այնուհետև Գէորգ սարկաւագի՝ կամ որ նոյն է՝ Յակոբ վարդապետի հետ եղբայրական ներողամտութեամբ վարուելու հարկ չկար։

Իսկ երկրորդը, այն է՝ եպիսկոպոսական աստիճանի վիճակելու համար նիւթուած պատիր հնարքը սկսաւ հոգելոյս Վանահօր վերոյիշեալ խոստմամբը նոյնպէս միաբանական ժողովոյ մը մէջ՝ երբ միաբանութիւնը վանքին դրամական նեղ վիճակը իր անժամանակ առաջարկութեան դէմ արժանահաս պատասխան դրաւ, և վերջացաւ Էջմիածնէ եպիսկոպոսու-

* Արմաշու վանքին մէջ մանաւանդ թուղթը ստորագրողներուն մէկին բերնին ան ատեններն սովորական եղած էր ասոր ինոր դէմ այսպիսի անարգական բառեր անխիր ժայթքել։ Մեղք մըն է այս արժանի դատապարտութեան։ «Որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի 'ի գեհենն հրոյն». Մատթ. Ե. 22. «Ամենայն բան տգեղ 'ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ». Եփես. Դ. 20. և թէ՝ «Մարդ բարի 'ի բարի դանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս, և մարդ չար 'ի չար դանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս։ Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ամենայն դատարկ բանի, զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի». Մատթ. Իբ. 35. 36.

թեամբ վերադառնալէ եռքը տարի մը չանցած իր եպիսկոպոսական ծախքը, որ տասը հազարի մօտ կոյրներ, վանաց հաշուետումարին մէջ անցընելով*, և միաբանութեան ստորագրել տալով այնպիսի ժամանակի մէջ՝ յորում վանքը եկեղեցւոյ շինութեան ծախուց ծանրութեան տակ առաջուան պէս ճնշուած կգտնուէր, և յորում այսպիսի իրաց դիտող միաբանք ձայներնին հանելու տրամադրութեան մէջ չէին։

Դանը, թէ հոգելոյս Գէորգ եպիսկոպոս, որոյ վանահայրական ընտրութիւնը իբրև վանքին նորանոր բարգաւաճանաց և յառաջադիմութեան դարադլուխը ողջունեցաւ միաբանից մեծագոյն մասէն, ինչպէ՞ս պակեց իր վրայ տածուած այդ գեղեցիկ ակնկալութիւնները։

Իր կառավարական ձևը, վանուց կանոնագրոյն դծած օրինաց հակառակ, ինքնօրինական և ապիկամի էր. կանոնական խանդարմունք իր տեսչական գործոց մէջ նոյն իսկ իր վրայ յայտնի կնշմարուէին, մինչդեռ իր անխուսափելի պարտքերէն մին էր, իբրև վանահայր, միաբանութեան կանոնաց անթերի գործադրութեան հսկել կան. յօդ. ԺԵ. և անոնց հակառակ վարուող միաբաններն ալ 'ի կանոնապահութիւն յորդորել։ Թողունք ասոնք, վանաց դրամական անհնարին անձկութեան ատեն անպէտ և տարաժամ ծախքեր կընէր ինքիր գլխուն առանց Տնօրէն ժողովոյ որոշման, չնայելով ամենևին՝ որ անդին թէ ինքը և թէ միաբանութիւնը ուրիշ ամենածանր և ամենակարևոր ծախքի մը՝ եկեղեցւոյ շինութեան հոգերուն տակը պարանոցաթաղ ճնշուած էին։ Միաբանութեան նկատմամբ ունեցած վարմունքն ըսես, միաբաններէն որոնց դէմ որ փցուն պատճառով մը զդածուէր

* Թէ և Էջմիածին գացած ատենը այս ծախքը վանաց սնոտիկն չառնելն ալ յայտնի չէ մեզի. որովհետև Միքայէլ վարդապետը վանքէն մեկնած օրերը կթախանձէր իրեն՝ որ վանաց հաշիւները նայելէն ետև ճամբայ ելլէ, բայց ինքը ժամանակ չունիմ ըսելով հաշուոյ վրայ անդամ չնայեցաւ, թերևս վանքին սնոտիկն առանձին ճանապարհի ծախքը միաբանութեան յայտնի չընելու համար։

վաղ կամ անագան հարկաւ զրկանք մը կամ նախատինք մը կհասցընէր անոր կամ աստիճանին, կամ պատուոյն, և կամ անձին. իսկ որոնց հետ մանաւոր սէր մը կամ բարեկամութիւն մը ունէր, անոնց յառաջացման ջանահնար ըլլալ, և ո՛ և իցէ դիտողութիւն մը անոնց պաշտօնական գործողութեանց վրայ լսել չուզելիր ամենէն քաղցր հաճոյքներէն մին էր։

Աս կարգի անտեղութիւնք էին ահա, որ մինչև 1870, ապրիլ ամսոյ մէջերը միաբանից մէկ մասին խոր դժգոհութիւնը հրաւիրեցին իր վրայ։ Միաբանից մէկ մասը ըսին, որ ովհետև միաբաններէն Խորէն վարդապետը և Կարապետ սարկաւագը 'ի վաղուց հետէ վանահօր հետ մանաւոր բարեկամութեամբ մը կապուած ըլլալով՝ յամենայնի անոր կուսակից եւ ջերմպաշտպան կհանդիսանային. Միքայէլ եւ Մեսրոպ ծերունի վարդապետներն ալ թէ եւ եղածներէն դժգոհ կցցընէին ինքզինքնին, մանաւանդ առաջինը վանահօր ապրաքները եւ վանական կառավարութեան այլ եւ այլ ճիւղերը իր ամենօրեայ դանդատանց առարկայ ըրած էր, բայց իրենց վանքին հետ սերտիւ կապուած պատկառելի ծերութեան նչխարեալ օրերն ատելութեան եւ անհանդստութեան նշաւակ ընելու երկիւղը կամայ ակամայ Վանահօր հաճոյից առջեւ ըռելու կստիպէր զիրենք։ Մեր ըսած միաբաններն էին Ստեփան եւ Յակոբ վարդապետք, ընդ որս էինք եւ մեք իսկ դիտովին, որ սրտցաւութեամբ իրարու հետ կխօսակցէինք վանքին մէջ տեղի ունեցած անհարթութեանց վրայ, եւ առ սէր վանայ եւ միաբանութեան անոնց դարմանին վրայ իրարու հետ կխորհէինք։ Աս է թղթոյ մեղի համար «Վանահօր դէմ ասոր անոր դանդատ կրնէր» ըսելը յեր. 3։ Եւ սակայն քաջ հասու լինելով որ միաբանից տարբեր տրամադրութեան պատճառաւ իրաց ուղղութեան դարմանը վանքին մէջ դանել անհնարին էր, Ստեփան վարդապետը եւ մեք մտքերնիս հաստատապէս դրինք, որ մէյմէկ պատճառով վանքէն եւ միաբանութենէն հեռանանք։

Նոյն տարին, 1870 ին, ամառնային ամսոյ մէջ Գէորգ եպիսկոպոս իր դիւղը եւ անկէ Պոլիս դնաց վանական գործով մը, մենք ալ իր հրամանաւ մեր դիւղը եւ Պոլիս դացինք Տպարանի վերաբերեալ գործով մը։ 'Ի դարձին 'ի Պոլսոյ մեր դժգոհութեան ձայնը եւ վանքէն մեկնելու խորհուրդը ականջը հասած ըլլալով՝ չուզեց վճարել մեր վերոյիշեալ ճամբորդութեան ծախքը, եւ 50 դահեկան դլխարկի մը գինը, զոր մեր անձնական քսակէն վճարած ըլլալով՝ իրաւամբ վանայ սնտուկէն կպահանջէինք, եւ ընդհանուր ժողով կամ ամբողջ միաբանութիւնը դումարեց՝ դլխարկին և մեր միւս պահանջքէն ծագած սա խնդիրը լուծելու համար, թէ օրէն էր միաբանի մը անձնական և ո՛չ վանական գործով ըրած ճամբորդութեան ծախքը վանքին սնտուկէն վճարել։ Դլխարկին համար որոշ բան մը չըսուեցաւ, ճամբորդութեան ծախսուց խնդրոյն մէջ ալ թէ՛ և իրաւացի փաստերով կպնդէինք մեք թէ տպարանի համար ըրած ճամբորդութեան ծախքերնուս հետ մասամբ իւիք կեց է այդ ծախքը, և թէ քանի որ վանայ մօտակայ գիւղերէն եղող միաբանք անձնական գործեր նին պատահած ատեն վանայ ձիերով կերթան իրենց գիւղերը, իրաւունք չէր մեր գիւղը վանքէն հեռի ըլլալուն համար միւս միաբանից վայելած շնորհքէն զմեզ զրկել, բայց 'ի զուր. վանահայրը մեր դէմ զդացած անձնական կրից բռնութենէ վարեալ, միաբաններէն ալ ոմանք, ինչպէս էին Խորէն վարդապետ և Կարապետ սարկաւագ, վանահօր հետ կապած վաղեմի բարեկամութենէն հրապուրեալ, ոմանք ալ վանահօր հաճոյից դիմախօսելու հետևանքներէն վախնալով, առ հասարակ արձանագրեցին և ստորագրեցին թէ օրէն չէր դըլխարկին գինը և այնպիսի ճանապարհի ծախք մը վանքին սնտուկէն վճարել։

Հապա թէ սա խնդիրը լմնցած էր, յանկարծ մեր դժգոհութեան նիւթերուն վրայ խնդիր յարոյց վանահայրը, և իր կանոնի հակառակ վարմանց և մեղ ըրած զրկանաց վրայ բացատրութիւն ուղեց մեզմէ։ Տարօրինակ էր սա հարցուածը

և հակառակ կանոնի, ըստ որոյ պէտք էր այսպիսի դիպաց մէջ նախ առանձինն և Տնօրէն ժողովոյ մէջ 'ի պատասխանատուութիւն հրաւիրէր զմեզ, և ապա՝ եթէ հարկը պահանջէր՝ Տնօրէն ժողովոյ հաւանութեամբ ընդհանուր ժողովոյ մէջ առաջարկելի խնդրոց կարգը անցընէր զայն։ Այսկէ նուազ մեղադրելի չէր իր նպատակն ալ, որով մեր դժգոհութեան ձայնը իրաւացի կերպով դոհ ընելու տեղը՝ ընդհանուր ժողովոյ միջոցաւ խզդել և մեզ յետոյ կասեցընել կրնար իրմէն դժգոհութեամբ վանքէն հեռանալու խորհուրդնէս. վանքէն մեկնելիս վոյթը չէր, ան կերպով առնել քալելիս իր պատուոյն անարգանք կհամարէր. ասոր համար է՝ որ մեկ երկու օր ետքը ընդհանուր ժողովոյ մատուցած ամբաստանագրոյն մէջ մեր բացակայութեան խորհրդոյն ամենեին մեր մտքէն չանցած պատճառ և այլօրինակ դոյն կուտայ. «Ե՞ 'ի Ն-ՂԸ. Եր. 4։ Մենք առանց առաջարկութեան աս ապօրինաւոր կերպին վրայ ժողովոյն և իր ուշադրութիւնը հրաւիրելու՝ մեզի ուղղուած հարցմանց մեր բացատրութիւնները տուինք, և լսեցինք իրմէն անարգական ծանր խօսքեր, մինչև ժողովական միաբանից հետզհետէ դուրս ելլելովը ժողովը լուծուեցաւ առանց այս մասին որոշում մը և արձանագրութիւն մ' ըլլալու։

Հետևեալ օրը մեզ համար բողոքոյ գիր մը կուղղէ առվանական ժողովն. Ն-ՂԸ. Եր. 3. աս լսելով մեք ևս ըստիպուեցանք անմիջապէս ժողովոյն հրաժեշտի թուղթ մը գրել, որոյ պատճառ նշանակած էինք վանահօր կանոնի հակառակ ընթացքը, ծայրագունութեան և չերամատածութեան խնդիրներ, և վանահօր մեր դէմ ցցուցած վաղեմի անսիրելութիւնը, աղաչելով թղթոյն վերջերը՝ որ բարեհաճի ժողովը դէմ յանդիման հարցափորձիւ չդատել մեզ երկուքս, որովհետև աղէկ գիտէինք՝ որ աս կերպով նախորդ օրուան պէս անոր անհնարին բարկութեան թափոյն և դժպհի թրշ նամանաց նշաւակ պիտի ըլլայինք։ Իսկ հոգելոյս Վանահայրը իր բողոքագրոյն սկիզբէն մինչև վերջը նախատական մակդիրներու տարափներ տեղալով մեր վրայ կբողոքէր։

Ա. որպէս թէ մեք Պօլսեցի երեւելի անձի մը միամբութիւնը դայթակղեցուցած ըլլանք իր և վանքին վարդապետներուն հաւատարմութեան վրայ, մինչդեռ ինքը կվանայ եղեր այն անձին միմնորդութիւնը յօգուտ վանաց 'ի կիր արկանել։ Ա. զրպարտութիւնը նախորդ ընդհանուր ժողովոյ մէջ ալ յօդեր էր մեր վրայ, բայց չէր կրցեր հաստատել. որովհետև այդպիսի դայթակղեցուցիչ ընթացք մը երբէք մեր կողմանէ տեղի ունեցած չէր։ Ինքը իր բողոքագրոյն մէջ ասիկայ կբրկնելու երկու պատճառ ուներ կրնանք ըսել. մէկ մը՝ որպէս զի վարդապետաց ամենուն ատելութիւնը գրգռէ մեր վրայ, որ իր ան ատենուան գործին շատ աղէկ կուգար, մէկ մ'ալ՝ որովհետև հոգելոյս Պալեան ճարտարապետ ամիրային վրայ վանքին ունեցած մեծագումար պահանջից յապաղելուն ինքը պատճառ տուած էր իր կրքոտ վարմունքովը, և ամեն անգամ որ Պօլիսէն կգառնար՝ այս գումարին հատուցման մերձակայ յաջողութեան մնոտի յոյսերով կենդացընէր միաբանութիւնը, և անգամ մ'ալ Պօլիսէն վերադառնալուն Տնօրէն ժողովոյ տօմարին մէջ արձանագրել տուաւ՝ թէ Պալեան ժառանգներէն մին խոստացեր է փոխանակ 45 հազար դահեկան պարտուց՝ հարիւր հազար դահեկան վճարել վանաց, թէ՝ և յետոյ 45 հազար դահեկան մայր պահանջքն ալ չկրցաւ առնուլ, ուստի իր աս կորանաց աղաչը ուրիշին արեամբ լուալու համար ներկայ բողոքը կընէ մեզի համար զոր ընդհանուր ժողովոյ մատեանին մէջն ալ արձանագրել կենդրէ 'ի վերջ թղթոյն, որպէս զի այն արձանագրեալ բողոքոյ շնորհիւ կարծել տայ վանքին ներկայ և ապագայ սերընդոց՝ թէ վանահայրը ան ստակը պիտի առնէ եղեր երեւելի անձի մը միջնորդութեամբ, բայց Պողոս վարդապետը այն անձին միամտութիւնը վանահօր և վարդապետաց հաւատարմութեան վրայ դայթակղեցուցած ըլլալուն համար չէ յաջողեր առնուլ։ Աղէկ բարեմտութիւն։

Երկրորդ բողոքով կենդրէ մեզմէ ապացուցանել՝ թէ

որոնք էին մեզ ըրած զրկանքները և որպիսի դէպքերու մէջ պատահած։ Այսքանից շատերուն գիտցած բանն էր՝ և նախորդ վանական ժողովոյ մէջ իրեն ալ յայտնած էինք՝ թէ ծայրագունութեան և շերամատածութեան խնդիրներուն վրայ կկայանային աս զրկանքները։ Այսոնց վրայ գործոյս ընթացքին մէջ առաջ երթալով տեղ տեղ բացայայտակի պիտի խօսուի։

Երրորդին մէջ կհարցնէ՝ թէ որոնք են այն կանոնաց խանդարմունք, որովք զինքը համարձակ ամբաստաներ ենք նախորդ ընդհանուր ժողովոյ մէջ։

Այս անկանոնութիւններն էին նախ՝ շատ ատեն որոշեալ օրին Տնօրէն ժողով չգումարելը՝ հակառակ կանոնադրոյն թէ յօդուածին, որ կարամադրէ՝ թէ Տնօրէն ժողովը իր կանոնաւոր նիստերը կկատարէ շաբաթն անգամ մը որոշեալ օրին. միշտ վանահօր վերարերելով, իբրև նախագահ, զայն գումարելու պաշտօնը *. Երկրորդ՝ վանական գործեր ինքնուրոյն տնօրինելը առանց Տնօրէն ժողովոյն գիտութեան և որոշման, որոյ միայն կպատկաներ վարչական բովանդակ գործոց տեսչութիւնը ընդ նախագահութեամբ վանահօր՝ ըստ ԻԳ յօդուածի կանոնին. Երրորդ՝ մեր իրաւասութեամբ ներքև դրուած պաշտօններուն անմիջական միջամտութիւններ ընելը. կանոնազանցութիւն՝ որ դէմ ընդդէմ կհակառակի կանոնին ԼԳ յօդուածոյն տրամադրութեան։ Զորս վարդապետը, եթէ ուզեն՝ կրնան ասոնց ապացոյցը գտնել վանաց հաշուետումարներէն, Տնօրէն ժողովոյ արձանագրքէն և անհերքելի իրողութիւններէ։

Չորրորդին մէջ հարցուցեր, կըսէ. ինչու նորոգ գրնուած մատենից ցանկը անվրայթ եղաւ ի գիր դրոշմել իբրև

*. Դժբաղթաբար կանոնագրոյն աս յօդուածին հակառակ՝ հոգելոյս վանահայրը իր տարիւ կէս տարուան բացակայութիւնները մէկդի առնելով, վանահայրական շրջանին մէջ հազիւ հազ տասն և չորս անգամ ժողովը ի նիստ հրաւիրած է, ինչպէս կտեսնուի նոյն ժողովոյ արձանագրութենէն։

գրապահ։ Այսոր կպատասխանենք. որովհետև վանքին մէջ ամենէն կանուխ եկողը, մանաւանդ դպրոցին պաշտօնեայքը, Պօլիս գացած առենին նորանոր գիրքեր կգնէին առանց մեր գիտութեան, և վանքը բերած առենին ալ մեզի չէին յանձնէր, որ կարող ըլլայինք գրոց ցանկին մէջ անցընել։ Հարցուցէք, կըսէ, ինչու՞ բարձիթողի ըրաւ լուսարարապետութեան և դանձապետութեան պաշտօնները։ Կպատասխանենք. որովհետև լուսարարապետութեան պաշտօնուս կանոնի հակառակ միջամտութիւններ կընէր. դանձապետութեան պաշտօնն ալ ազատ էինք վարելու կամ ձգելու երբոր ուզէինք, զի միւս հինգ պաշտօններուն կարդէն չէր, այն որոց պաշտօնակալք երկու տարին անգամ մը Տնօրէն ժողովէն կ'ընտրուէին, և մինչև այս պայմանաժամին լրումը չէին կրնար ինքնակամ հրաժարիլ իրենց պաշտօնէն։

Ի վերջոյ կառաջարկէ ժողովոյն, որ մանաժողով մը ընտրելով մատենադարանին, դանձարանին, դանձապետութեան և տպարանին հաշիւներն առնեն մեզնէ։

Վանահօր աս բողոքագրոյն օրինակը ընդհանուր ժողովը թղթով մը մեզի խրկեր էր բան առ բան անոր պատասխանելու համար, որովհետև այնպէս հրահանգ առած էին դատախազ, բայց միանգամայն դատաւորի պաշտօն վարող վանահօրմէն. Խորն. եր. Կ. 6։ Այս հոդ չէր, մանաւանդ թէ մեր ուղած բանն էր, ցաւալին այն է՝ որ Վանահօր համար մեր տուած բողոքագրոյն հաւասարն ալ փոխադարձաբար անոր չեն խրկեր՝ ի պատասխանատուութիւն. ընդհակառակն՝ որպէս թէ խնդրոյն դատաստանական վիճակին մէջ դատախազի, վկայի, փաստաբանի և դատաւորի դեր միանդամայն իրենց աւելի էր խաղալ, միայն կանոնական խանդարմանց մասին գիտցածնիս իրենց յայտնելու հրաւէր կարդալով մեզ, մեկալները իրենք մեզի գրած թղթերնուն մէջ միաւորի հերքելու կելնեն առանց գոնէ մեզնէ միանդամ անոնց վրայ բացատրութիւն պահանջելու։ Ծայրագունութեան խնդրոյն համար ալ յայտարարեցաւ Վանահայրը մեզի անիրաւեցաւ ըսած է.

ինք մեր թղթոյն մէջ, կպատասխանեն՝ թէ այդ բողոքդ կրօնաւորի խնարհութեան պատիւ չբերեր, ըսել կուզեն՝ թէ Վանահայրը այդ խնդրոյն մէջ ինչ կերպով ալ վարուած ըլլայ քեզի դէմ, դուն խնարհութեամբ պէտք է լռես. որպէս թէ աս խնարհութեան առաքինութիւնը իբրև կրօնաւոր ամենուս ալ հարկաւոր չըլլար, և մենք ուրիշին խարդաւանաց առիւ խաղալիկ, ըլլալու էինք, որ միայն էր աս իրողութեան մէջ պատճառ մեր խորին ցաւոց։ Աս խարդաւանանքը մեր քննայուած, էր Խորէն վարդապետի միջոցաւ, որ 1869ին վերջերը Գէորգ եպիսկոպոսի հետ Աստափաղար երթալով յուզարկաւորի պատրուակաւ, անշուշտ մէջերնին կարգադրուած էլն մը համաձայն, հոն որպէս թէ Աստաբազարի երեւելեաց խնդրով ինքնուրոյն ծայրագոյն իշխանութիւն առեր և վանք դարձեր էր դրով մը, յորում Գէորգ եպիսկոպոս նոյն ասոիճանը ընդունելու կհրաւիրէր մեզ ալ յԱստափաղար։ Ինչ հարկ էր խորէն վարդապետին այսպիսի հնարքներու դիմել վարդապետական ասոիճանի մէջ երիցութեան վիճակելու փափաքին հասնելու համար, միթէ իր այդպիսի փափաք մը ունենալը պարզապէս մեզի յայտնած առնելը մենք ամենայն սիրով և յօժարութեամբ իր փափաքին չէ՞նք հաստատեր ոչինչը։ Բարոյականը կըսէ՝ թէ մարդ մը անարժան հնարագիտութիւններ նիւթելով իր ընկերին դէմ՝ թէ զինքը անպատիւ կընէ՝ երբոր իր լաւած հաղբերը յայտնուին, և թէ՝ շատ անդամ իր պեղած խորխորատները՝ ի վնաս և ի պատուհաս իրեն կդարձնէ, և կմեղանչէ առ ընկերն ունեցած պարտուց ամենէն գլխաւորին՝ այսինքն սիրոյ դէմ։

Գալով շերամատածութեան խնդրոյն, մենք կըսողքէինք թէ վանահայրը նախատինք ըրաւ մեզի՝ այդ պաշտօնը հնարքով մը մեզմէ կորզելով, զոր Տնօրէն ժողովը յանձնած էր մեզ՝ ի բացակայութեան վանահօր, թէ՝ և առանց արձանագրութեան. իրենք չեն հարցներ՝ թէ ինչ հնարք է այդ որովհետև շատերը արդէն գիտէին ինչ ըլլալը. ընդհակառակը այս խարդախանքը պարարկելու համար կդրեն մեզ՝

թէ այդ պաշտօնը քեզնէ առնողը վանահայրը չէ, այլ Տնօրէն ժողովը, և՝ ի հաստատութիւն այսր՝ ժողովոյ արձանագրութեան օրինակն ալ դրեր են՝ ի Բոլոն. էր. 8։ Տնօրէն ժողովոյ այն արձանագրութիւնը առաջուընէ մեզի ծանօթ էր, ինչպէս որ մեր ըսած նենդութիւնն ալ իրենցմէ շատերուն յայտնի էր։ Աս նենդութիւնը 1870 տարւոյ սկիզբը Վանահօր, Ստեփան և Ներսէս վարդապետաց մէջտեղը խորամանդուած էր Աստափաղար դտնուած առենին, ինչպէս որ ետքէն անտարակուսելի կերպով ստուգուեցաւ։ Նենդութեան առաջին թելը նիւթած էր Ներսէս վարդապետը, որ ան ատենը դեռ Կարապետ Սիսակ սարկաւագ էր, իր չարահնար քսութիւններովը և տարապարտ կասկածանօք, զոր առանց խղճմտութեան Վանահօր առջևը դրեր էր՝ նոյն պաշտօնը ընդ իրաւասութեամբ Ստեփան վարդապետի իր ձեռքն անցընելու համար։ Վանահայրը, դիւրաբուր աս վարդապետին քսութեանց, և առաջուընէ մեր դէմ ալ դէշ կերպով զգածեալ, պատուիրեր էր Ստեփան վարդապետին՝ որ վանք դառնալուն ուրիշ երկու թնդիր առիթ առնելով անոնց կարգին մէջ բողոքէ՝ թէ ինչու՞ շերամատածութեան պաշտօնը, իբր սեպհական գործ ամառապետի, իրեն իրաւասութեան ներքևը չդնելու նախատինքը կընէ իրեն Տնօրէն ժողովը, մնացածը ժողովոյն մէջ անօրինել իր վրայ ստանձներով։ Երօք ալ՝ ի դարձին՝ ի վանս աս պատրաստուած յատակագծին համեմատ դործեցին. զգաց Տնօրէն ժողովը, բայց լռեց, լռել յորդորեց մեզ ալ Միքայէլ վարդապետը, և այսպէս շերամատածութեան պաշտօնը մեզմէ առնուելով Ստեփան վարդապետին տրուեցաւ. ան ալ Ներսէս վարդապետին յանձնեց զայն ընդ իւրով իրաւասութեամբ։

Ահա աս կերպով եղած արձանագրութեան մէն է, զոր չորս վարդապետք իրենց թղթոյն մէջ մեր առջևը դնելով, իրաց արտաքին ձևակերպութեան վրայ յենելով քան թէ իրենց ներքին գիտակցութեամբ կըսեն, թէ Վանահայրը իրմէն շերամատածութեան պաշտօն չէ առած, այլ Տնօրէն

ժողովը* ։

Իսկ Վանահօր առ մեզ ցցուցած անսիրելութեան համար, զոր մեր 'ի վանաց հրաժեշտին ամենէն մեծ և գլխաւոր պատճառը դրած էինք, և զոր ակներև տեսնելու համար Արդոսեան աչք պէտք չէր, վասն զի արևու լոյսէն աւելի յայտնի կնկատուէր այն, զարմանալի է՝ որ անոր նշանն անդամ չտեսներ ընդհանուր ժողովը Վանահօր ընթացից մէջ, և յընդոստան կապիծանաց ակի կհամարի զայն։ Ո՞ր ամենէն անուրանալի ճշմարտութիւններն անդամ՝ չէ ուրացեր, չէ վարադուրեր և կամ դունադեղեր կուսակցութեան, երկչոտութեան և անտարբերութեան կոյր և ցուրտ ոգին։

Ընդհանուր ժողովոյ, որոյ մեծագոյն և տիրող մասը կկազմէին չորս վարդապետք**, աս տխուր տրամադրութիւնը տեսնելով մեք, տրամադրութիւն մը՝ յորմէ ընկերութիւն մը միշտ 'ի չարաշուք անկարգութիւն կդառնայ՝ իր մէջը ունենալով կուսակցութեան և ճշմարտութեան ձայնը խղդե-

*. Վանահայրը աս երկուքին վրայ (մենք միայն մեր անձին եղածներուն վրայ խօսելով) յետոյ ուրիշ զրկանքներ ալ աւելցուց. որոշեալ ամսականը, ինչպէս միաբանից շատերուն, մեզի ալ չէր հատուցանէր. իր փոխանորդ Միքայէլ վարդապետը հիւանդութեան ատենիս բժշկի և դեղորէից համար ըրած ծախքերնիս չվճարեց, և իրեն ալ իմացուցած ատենիս չլուելոյն ըրաւ. թէ՝ և իր և այլոց միաբանից ոմանց հիւանդութեանց պատճառաւ աս կարգի ծախքեր, ինչպէս վանքին հաշուետումարներէն կտեսնուի, դեռորէն կհոսէին, և անդամ մը միայն մենք մեր ձեռքը երեսուն Օսմ. ոսկի վճարեցինք իրեն հիւանդութեան դարմանին համար Պոլիսէն յատկապէս վանք բերուած բժշկի մը։ Արքայ Կեթէի վարդապետարանին սկիզբէն մինչև կէսը զրեթէ մենք թարգմանեցինք, և մեր բացակայութեան պատճառաւ Խորէն վարդապետը շարունակեց, բայց իր հրամանաւ տպուած այն գրքին թարգմանիչ միայն Խորէն վարդապետը կնշանակուի։ Իրեն ըստ ինքեան փոքր են, խարումները ցաւալի են։

**. Որովհետև այս նիստին մէջ ընդհանուր ժողովը եօթը վարդապետ կրաղկանար, 'ի բաց առնելով վանահայրը և մեզ որ ամբաստանող և դատափետեալ էինք աս նիստին մէջ։

լու ամենէն անդոսնելի ախտերը, անօգուտ համարեցինք այնուհետև պէտք են անոր դրոյն պատասխանել, թէ և ինչպէս վերը տեսնուեցաւ, մեր դրածները հաստատելու համար զօրաւոր ապացոյցներ առձեռն պատրաստ ունէինք, մանաւանդ որ ժողովը մեզի ուղղած թղթոյն վերջերը «եթէ այլ ինչ զօրաւոր պատճառ հրաժեշտի ունիս, բացատրել աղաչեմք» ըսելով ինչ որ ալ պատասխանէինք 'ի հաստատութիւն մեր առջի գրածներուն, ընդունելու տրամադիր չլալը կանխաւ զգացուցած էր մեզ։ Ի՞նչ կմնար մեզ ուրեմն ընել 'ի ժամուն՝ վանքէն առնել քալել։ բայց աս ալ անմիջապէս ընել անհնար էր. ձեռքերնիս բաւական մեծկակ հաշիւներ ունէինք, մատենադարանին, եկեղեցւոյ դանձարանին, միաբանութեան դանձանակին և տպարանին հաշիւները, և վանահայրը իր թղթոյն վերջերը կպատուիրեր վանական ժողովոյն, որ յանձնաժողով մ'ընտրելով աս հաշիւներն առնեն մեզնէ։ Մենք թէ՝ և հաշիւ տալէ չէինք վախնար ուրիշ ժամանակի մը համար, բայց ինչպէս որ Վիգթոր Հիւկոյի Պիէն—վրնույին հետ վիճաբանող նախարարը իր նպատակին ուղղակի հասնիլ կնկրտէր առանց ուշադրութիւն ընելու երբէք ան ամեն խոչընդոտներուն, որոնք իր քալած շահու և կրից ճանապարհին վրայ արգելք կելլային, և որք կոնուանին խիղճ, հաւատարմութիւն, արդարութիւն և պարտք*, նոյնպէս մենք ալ Վանահօր կրից աս յուղեալ վիճակին մէջ տեսնուածներուն վրայ յենլով պատճառ մը չունէինք անոր և կաղմուելիք յանձնաժողովին խղճին և արդարասիրութեան վրայ վստահելու մեր համարատուութեան մէջ. ուստի լաւագոյն համարեցինք իրաց աս վիճակին մէջ, ինչպէս կրսեն, բանը անոյշը կապել, յոր 'ի ծածուկ կյորդորէր զմեզ միաբանից մեծագոյն մասն ալ։

Հոս քանի մը անստոյգ պարագայներ մէջ կբերուին թղթ-

*. Վիգթոր Հիւկոյի թշուառք անուն գրքին աս յարացոյցը բերելնուս համար չկարծուի թէ աս հեղինակին ամեն ըսածներուն հաւնած ենք։

թադիր վարդապետք՝ թելադրեալ 'ի վանահօրէն, որպէս թէ մեզի նախատինք մ'ընելու մտօք։ Կրսեն, Բ-ոդ. եր. 7. թէ մենք գլուխիս վերայ հագնելով վանահօր սենեակը դացած ըլլանք. ասիկայ պարզապէս եղծերուաքաղ մըն է, վերայ հագնիլը թէ՝ և երևելի վանքերու վանականաց մէջ դեղեցիկ սովորութիւն է, բայց Արմաշու վանքին մէջ այդ կրօնաւորական բարեվայել սովորութիւնը չկենալուն համար մենք ալ վերայ դրած չենք վանահօր սենեակը դացած ատենիս։ Կրսեն՝ թէ հրապարակաւ և ամեն տեղ ըրած թշնամանքներուն համար ներողութիւն խնդրեց Վանահօրմէն, աս ալ բոլորովին ճշմարտութենէ օտար է, վասն զի հոն անցած խօսակցութիւնները ոչ թէ հրապարակաւ և ամեն տեղ եղած թշնամանքներու, որոնք արդէն տեղի ունեցած ալ չեն մեր կողմանէ, այլ վանական նախորդ երկու ժողովներուն մէջ բողոքոյ և ամբաստանութեան նիւթ եղած խնդիրներուն վրայ դարձան առ հասարակ։ Իրաւ ընդհանուր ժողովոյ վերոյիշեալ նիստին իրողութիւնները նշանակող թերթը պատռել խնդրեցինք, բայց վանահայրը և իր վարդապետները կրնային չպատռել զայն՝ թէ որ անոր պարունակութեան արդարացի ըլլալուն վրայ խղճերնին հանդարտ ըլլար։ Աս ալ մեծապացոյց մըն է չորս վարդապետաց նոյն արձանագրութիւնները 'ի շնորհս Վանահօր և կողմնակալ մտօք ստորագրած ըլլալնուն, որ 'ի շնորհս և հրամանաւ Վանահօր կպատռեն, և դարձեալ 'ի շնորհս նորա իրենց միաբանական թղթոյն մէջ իրենց ստորագրութեամբը կհրատարակեն։ Միշտ շնորհք, միշտ աչառութիւն, և ո՛չ երբէք արդարասիրութիւն։

Աս դէպքին վրայ հաղիւ ամիս մը անցած՝ ձեռքերնիս դտնուած պաշտօնեներէն դանձապետութեան և տպարանի հաշիւները տուինք խաղաղութեամբ. լուսարարապետութեան և դրապետութեան հաշիւներն ալ առնել առաջարկեցինք, տարբդլուխը եկած չէ ըսելով չառին։ Ուրեմն աս վարդապետներէն Տնօրէն ժողովոյ անդամ դտնուող Միքայէլ և Խորէն վարդապետները կամ իրենց ըսածը մտացած ըլլալու են, և

կամ խղճերնին զարմանալի է՝ որ դիտցածնին կամաւ խեղաթիւրելով կելլեն իրենց տետրակին մէջ կդրեն՝ թէ լուսարարապետութեան և դրապետութեան հաշիւները թողուց մինչև ցարդ, որպէս թէ իրենք աս հաշիւները ուղեր են մեզմէ, մենք չենք տուեր։ Մենք մեր աս պաշտօնեներուն հաշիւները տալու այնչափ հետամուտ էինք, որ ան ատենը հակառակ մեր առաջարկութեան զանոնք մեզնէ չպահանջելնին տեսնելով յաջորդ տարին Աստափազար փոխանորդութեան դացած ատենիս թախանձանօք խնդրեցինք լուսահոգի Վանահօրմէն որ հաշիւնիս առնելէն ետքը ճամբու դնէ մեզ, և իր դժկամակութիւնը տեսնելով՝ մեր այդ երկու պաշտաման վերաբերեալ բանալիները բերել իրեն յանձնելու համար իւր հաւանութիւնը խնդրեցինք, և չհաւանած ատենը իրօք այնպէս պիտի ընէինք ալ՝ թէ որ իր հիւանդագին վիճակին նայելով զինքը բարկացընելէ չզդուշանայինք։ Աստափազար դտնուած ատենիս ալ տասն անդամ լուր խրկեցինք իրենց՝ որ մեր հաշիւները առնեն, պատասխան խրկող անդամ չեղաւ։ Բայց հիմայ որ այդ վարդապետք դանձարանը և մատենադարանը առանց մեր ներկայութեան լուսահոգի Վանահօր հետ բացեր և մէջը դտնուածներն ուրիշ տեղ փոխադրեր են, ա՛լ այսուհետև ուզեն ալ նէ՝ հաշիւ տալու պարտականութիւն մը չպատկանիր մեզի, հիմայ պէտք է այդ վարդապետներն իրենք առաջ մեզի հաշիւ տան, որպէս զի մենք ալ յետոյ նոյնը իրենց տալու կարող ըլլանք։

Քանի մը օր անցնելէն ետքը նամակաւ խնդրեցինք վանայ Տնօրէն Ժողովէն, որ թոյլտուութիւն ըլլայ մեզի Պոլիս երթալու և եկեղեցի մը քարոզիչ ըլլալու։ Հաւանեցաւ Ժողովը, ինչպէս. Ց թղթոյ երեսին մէջ նշանակուած արձանագրութենէն ալ կտեսնուի, ուր կրսէ աս Ժողովը, թէ. խընդրուած այսր եղբօր դտաւ արժանի հաւանութեան, զի համաձայն էր հոգեւոր կոչման իւրում, և զի շահէր դոնեա*

*. Դոնեա բառը հոս մեզի անարդանք մ'ընելու մտօք ակեցուցած է աս արձանագրութիւնը գրող Խորէն վարդապետը։ Աս վարդապետին

զամանակաս իւր և զդինսհանդերձիցն» ։

Տնօրէն ժողովոյ սա արձանագրութեան՝ և անկէ անմիջապէս առաջ չորս վարդապետաց սա ըսածներուն, թէ՝ Տնօրէն ժողովը կտեսնէր՝ որ սա վարդապետին խելքը դի մը վաղեր է առանց խելացի որոշման մը, բայց սիրաշահելու համար դիտնալով և ակամայ ըռեց». և քիչ մը վարն ալ ընդհանուր ժողովոյ արձանագրութեան սա խօսքերուն մէջ՝ թէ « Տնօրէն ժողովն զիտելով չափ զանպատեհութիւն առաջարկութեան նորա, յոր մանաւանդ զի և պաշտամունք նորա համարձակիլ ո՛չ տային, առնու ակն երեսաց եղբայրութեան, և ո՛չ կամի ըստ օրինաց ճշտութեան և պատշաճութեան արհամարհել զթախանձելի խնդրողն » հակասութեանց անելանելի բաւիղ մը կայ ։ Ինչպէ՞ս կրնան, կհարցը նենք այդ չորս վարդապետներէն թէ՝ Տնօրէն և թէ՝ Ընդհանուր ժողովոյ անդամ դանուող Միքայել և Խորէն վարդապետաց, ինչպէ՞ս կրնան առանց իրենց անձանց հետ հակառակելու մեր խնդիրը Տնօրէն ժողովոյ մէջ մեր հոգեւոր կոչման և վանաց նիւթական շահուն համաձայն՝ ուստի և հաւանութեան արժանի դատել, և ապա ելլել թղթոյ և ընդհանուր ժողովոյ մէջ իբրև անպատեհ առաջարկութիւն, եղբայրութեան երեսաց ակնառութիւն և անխելք որոշում ըստորագրել. միթէ աղբիւր անդատին 'ի միոյ ականէ բղխիցէ՞ քաղցր և դառն* , կարելի բա՞ն է՝ որ մի և նոյն խնդիրը մէկուն թէ հոգեւոր կոչման և ծառայած տանը նիւթական շահուն համաձայն՝ և թէ՝ միանգամայն անպատեհ եւ անխելք ելլա՛յ թէ որ անպատեհ եւ անխելք է, հոգեւոր եւ մարմ-

ժողովական արձանագրութեանց մէջ ուրիշին վրայ այսպիսի թշնամական ակնարկութիւն ընելը նոր բան մը չէ. Տնօրէն ժողովոյ ատենադպիր եղած ատենն ալ իր չսիրած անձանց վրայ ըրած արձանագրութեանց մէջ անարդական բառ մը դրչին ծայրէն կթափէր՝ իսկ իր սիրելիներուն նկատմամբ մեղմ և պատուաւոր կերպ մը կբռնէր. մինչդեռ իր պարտքն էր իբրև ժողովոյ ատենադպիր անկողմնակալութեամբ ո՛չ թէ անձանց, այլ իրողութեանց համեմատ ուղղել իր գրիչը ։

*. Յակ. Գ. 11 ։

նաւոր կոչման համաձայն չէ. թէ որ հոգեւոր եւ մարմնաւոր կոչման համաձայն է, ուրեմն անխելք, անպատեհ, եղբայրութեան երեսաց ակնառութիւն եւ սիրաշահելու համար ընդունուած չելլար. սիրաշահելը՝ (որովհետեւ Թղթոյ 9 երեսին մէջ Ինչպէս կրնա՞ ըսելով վարդապետք՝ սա բառին ճշդիւ իմաստին անդէտ ելլալնին կ՚ցոյցնեն՝) խնդրողին հոգեւոր եւ մարմնաւոր կոչման անհամաձայն խնդիրներուն մէջ՝ մեծագոյն չարի մը խափանման համար եղած զիջման կրսուի. ակնառութիւնն ալ եղբօր անիրաւ եւ անտեղի խնդիրը 'ի մեծարանս երեսաց նորա պաշտպանելուն կրսեն. մեր խնդիրը քանի որ մեր հոգեւոր եւ մարմնաւոր կոչման համաձայն է եղեր, իրաւացի եւ օրինաւոր եղած կելլայ. ի՞նչպէս ուրեմն սիրաշահել եւ ակնառութիւն բառերուն տուած իմաստով կրնանք բացատրել անոր ընդունելութիւնը։ Այսանք թանձր եւ անմեկնելի հակասութիւններ են, որոնք թուղթը գրողներուն* ալ ստորագրողներուն ալ տրամաբանութեան պատիւ չեն բերեր ։

Դարձեալ՝ Տնօրէն ժողովոյ մեր 'ի Պոլիս երթալուն հաւանութեան մէկ պատճառէն՝ այսինքն «զիդոնեա շահեր զամանակաս և իւր զդինս հանդերձիցն» խօսքէն հանած երկու եզրակացութիւններն, այն՝ թէ «վանքէն առանց աղդային իշխանութեան կոչումը կենալու ինքնահաճութեամբ դուրս ելլողի մը ո՛չ ամսական վարձք եւ ո՛չ հանդերձից զին վճարելու սովորութիւն չկայ», եւ թէ «Վանահօր համար զինքը զրկեց ըսելուն, ամսականներն ակնարկելով, սուտ ելլալը վերը իւր Պոլիս երթալը որոշող Տնօրէն ժողովոյ արձանագրութեան մէջ կերևի, ուր ըսուած է՝ թէ Պոլիս երթալով գո՞նէ ամսականները և հանդերձից զինը կշահի», Նոյմ. եր. 9. 16, հակասական և թիւր են ։ Հակասական են, որովհետև Տնօրէն ժողովոյ վերը յիշուած մի և նոյն խօսքէն չորս վարդապետք մեղի թէ՝ ամսական և հանդերձագին չարուիլ

* Թուղթը Գէորգ եպիսկոպոս և Խորէն վարդապետ զլուխ զլխի տալով գրած են ։

հետևցուցեր են, և թէ տրուիլ. առաջին եղրաւացութեամբ չարուիլ, երկրորդով տրուիլ, որ անհնարին է սա բնաղանցապէս ստոյգ առածին զօրութեամբ, թէ «անհնարն է Խնդ-նել և դլխնել միանդամայն»։ Թիւր ալ են, վասն զի ժողովոյն կշռեալ բառէն մեղի ոչ ամսական չտալ կհետևի, և ո՛չ տալ. թէ որ այդ բառէն ամսական չտալ հետևէր, ապա հարկ կըլլար ըսել՝ թէ ուրեմն ամսականը շահողին ամսական տալու չէր, չշահողին տալու էր. ընթերցողաց կթողունք դատել՝ թէ ժողովոյն վերոյիշեալ խօսքէն այսպիսի խեղաթիւր և անիրաւ մեկնութիւն մը կրնա՞ ելլել. թող որ թէ՛ և ժողովոյն ըսածէն վարդապետաց հանած մեկնութիւնը ելլէր, մեղի նկատմամբ ճշմարիտ չէր ըլլար այն. ինչու որ մենք ոչ թէ ինքնահաճութեամբ, այլ Տնօրէն ժողովոյ հաճութեամբ վանքէն դուրս ելած էինք, որ ուրիշ ատեններ բաւական կսեպուէր, առանց ազգային իշխանութեան կոչումը փնտռելու, վանքէն դուրս ելլող միաբանի մը ամսական և հանդերձագին վճարելու համար, և Տնօրէն ժողովը առ հասարակ և 'ի վաղուց հետէ ընկալեալ սովորութեանց հակառակ օրէնքներ սահմանելու պաշտօն չունէր վանքին մէջ։ Ժողովոյն այս կշռեալ բառէն մեղի ամսական տրուիլ ալ չհետևիր, կամ որ նոյն է՝ այս բառը Վանահօր համար մեղ ամսականէ զրկեց ըսելիս ալ սուտ չհաներ, որովհետև կշռեալ ըսելը կոռնիկամ կորոռ ըսել չէ. դիցուք՝ թէ ամսականիս և հանդերձագիներնիս շահեցանք, պէտք էր զայն ըստ միաբանութեան օրինաց մինչև ցյետին նաբարակիսն հասարակաց դանձանակին յանձնել կամ խրկել, մենք ի՞նչ ընէինք անատենը, բերանիս հոլին դէ՞մ բանայինք։

'Ի վերջոյ մեղ կնախատեն, որ Պօլիս երթալու ատենիս Իւսկիւտար Տէրոյենց Պատուելի մօտ եկեղեցի մը նստելով՝ անկէ աստուածաբանութեան դաս առնելու դիտաւորութիւն ունինք եղեր. և պղծական պիսաքակ կկոչեն զայն, Ռոմ. ԺԵ. 9։ Մեր Պօլիս երթալը թէ և յատկապէս այդ դիտամամբ չէր, բայց քանի որ հոն պիտի դանուէինք, յունարէն

և լատիներէն լեզուները սորվելու միտք ունէինք, որ եկեղեցականի մը շատ կարևոր են. դիցուք թէ աստուածաբանութեան ալ պարապելու դիտաւորութիւն ունեցած ըլլանք, ինչո՞ւ տղայական ախորժակ ըլլայ այդ, տղայք կուզե՞ն կամ կրնա՞ն աստուածաբանութիւն սորվիլ. միթէ մեր երանաշնորհ թարգմանիչ Հարք և ուրիշ շատ մարդիկ զանազան դարերու մէջ իրենց ուսումնասիրութեան ծարաւը չիջուցանելու համար ժամանակին դիտութեանց վառարան եղած քաղաքները և ականաւոր արանց ոտքը չէի՞ն դիմեր իրենց չափահաս հասակին մէջ։ Արմաշու վանաց մեր Հայրերը և Եղբայրները թէ որ չեն ուզեր որ գո՛նէ այսուհետև իրենց միաբանակիցք այդ պղծական ախորժակն ունենան, թող անոնց անլիութեան հասակին մէջ պէտք եղած չափով կրօնագիտութեան ուսում աւանդեն անոնց. համառօտ քրիստոնէական մը դաս տալով, կամ լուսաբանիդէն, Հիւրմիւզեանի աստուածաբանութենէն և բնական աստուածաբանութենէ քիչ մը դասախօսութիւն ընելով՝ աշակերտք մեծ պատրաստականութիւն մը չեն ստանար իրենց ապագայ պիտոյից համար՝ մանաւանդ մեր ապրած դարուն մէջ, պէտք է անոնց սուրբ գրոց ուսում, աստուածաբանութիւն և եկեղեցական պատմութիւն հաստատուն կամ գոնէ գոհացուցիչ կերպով աւանդել, ան ալ՝ թէ որ մէջերնին սորված ըլլալու տղայական ախորժակը ունեցող՝ և հիմայ սորվեցընելու կարող մէկը կայ։ Այս հաստատուն կամ գոհացուցիչ ուսումը մեր վանական դպրոցաց մէջ գոնէ չկենալուն համար է՝ որ մեր Ազգին վարդապետք, բաց 'ի սակաւագունից ոմանց, հաղիւ հաղ կարող կըլլան յետոյ իրենց անձին աշխատութեամբ հատուկտիր և ծայրաքաղ հմտութիւն մը ստանալ կրօնից վրայ, ան ալ՝ թէ որ շատերը առաջնորդական բազմակնճիռն զբաղմանց պատճառաւ ժամանակ ունենան ընթերցանութեան պարապելու. ոմանք ալ՝ թէ որ անուսումնասէր պատահին, յետին տգիտութեան թանձրամած խաւարին մէջ կխարխափեն։ Այսոր համար է՝ որ ժողովուրդնիս ալ, աննշան բացառութեամբ մը, տգէտ մնա-

ցած է 'ի հոգևորս. ասոր համար է՝ որ մինչդեռ մեր ազգային կենաց առաջին դարերուն մէջ ազգային մատենագրութիւնն եկեղեցական դասուն մենաշնորհն եղած կտեսնենք, մեր դարուն մէջ ամեն կարգի և մանաւանդ եկեղեցական մատենագրութիւնը դրեթէ դադարած է եկեղեցականաց մէջէն. մեր ժողովրդեան ձեռքը կաթոլիկ վարդապետաց և բողոքական աղանդաւորաց գրքերուն յաճախելը շառադնելով և 'ի սդտանս մեր մտաց կտեսնենք, և մեզի աւելի քան թէ Արշարունեաց Գրիգոր Քորեպիսկոպոսն 'ի դէպ կելլէ Վահան կամաբական մեծ պատրիկին ան ատենուան ըրած մեղմ՝ բայց իրաւացի ստդտանքը, թէ «զի՞ է՝ զի վարդապետական պատուով և իշխանութեամբ պերճանայք, և ոչ տանիք փոյթ ծաղկեցուցանել և պտղաբեր առնել զդաւազան վարդապետութեան ձերոյ շարադրութեամբ օգտակար մատենից, մեկնութեամբ սուրբ գրոց, կամ թարգմանութեամբ բանից սուրբ Հարց*»։ Բայց մեք դառնանք 'ի կարգ մեր պատմութեան։

Տնօրէն ժողովոյ ըրած խնդիրնիս ընդունուելէն քանի մը օր ետքը Պոլիս գացինք յանձնարարական թղթով Վանահօր առ Սմենապատիւ Սրբազան Պատրիարգ Հայրն։ Հոն ամօրեայ ժամանակ մնալէն ետքը՝ Նիկոմիդիոյ երեւելեաց ոմանց թախանձագին խնդրանաց, զոր կընէին թէ՛ Սրբազան Պատրիարգ Հօր և թէ՛ մեզ, հաւանելով՝ Նիկոմիդիա առ Նիկողայոս եպիսկոպոսն գնացինք իբրև օգնական առաջնորդութեան վիճակին յանձնարարական գրով Սրբազան Պատրիարք Հօր։

Հոգելոյս Վանահայրը, որ մինչև 'ի Նիկոմիդիա ճանապարհակից պատահեցաւ մեզի այս ճամբորդութեան մէջ, այս անցքին վրայ 'ի բարոյ մինչև ցչար բան մը չըսելով մեզի՝ վանք գացածին պէս միաբանութեան ընդհանուր ժողովը կգումարէ, ուր այն քմակարկատ և թշնամանից պատմութիւնը ընելով՝ որ գրուած է թղթոյ 10 երեսին մէջ, կամբասանէ մեզ՝ որպէս թէ ըստ հաճոյս մեր և առանց իր գիտութեան նոր պաշտօն մ՝ընդունելով՝ օրինազանցութիւն գործեր և չարաչար ապստամբեր ենք իր և վանական տեսչութեան իշխանութենէն։ Ընդհանուր ժողովին ալ, որոյ ինչպէս ըսինք, տիրող և մեծագոյն մասը մեր չորս վարդապետներն են, առանց դատափետեալ կողմին ալ մտիկ ընելու՝ մեկէն անոր պատմութեան մէջ սուտ չկենալուն կհամոզուի, «Թ. 'ի 17 եր. Բ.Ը.»։ և փոխանակ Վանահօր կամ Տնօրէն ժողովոյ պատուիրելու՝ որ թղթակցութեամբ կամ մեզ վանք կանչելով միանգամ եղածը հաւատի քննութեամբ ստուգեն՝ ինչպէս կտրամադրէր կանոնագրոյն Ժ. յօդուածը, կելլէ անմիջապէս ան կսկծելի նամակը կգրէ մեզ, որ հրատարակուած է Բ.Ը.ոյ 11. 12 երեսներուն մէջ։ Վանահօր մեզի գրածին նայելով՝ աս գործողութեան մէջ թղթակցութեան սահմանէն ալ անցնելով՝ ուրիշ (չենք գիտեր ի՛նչ) բաներ ալ պիտի ընեն եղեր ժողովոյ անդամք, պիտի ընդվզեն, կընճանան, խոճոճեն և ձեռներեց համարձակութիւններ ալ ընեն եղեր, թէ որ վանահայրը զիրենք չդուշացընէ եղեր. Բ.Ը.ոյ. եր. 19։ Կհետևի ուրեմն՝ որ գրած թղթերնին ալ վանահօր չդուշացընելովը և հրամանաւը գրեր են։

Հարկ չէ ընդհանուր ժողովոյ և մեր մէջ այս մասին տեղի ունեցած թղթակցութեանց վրայ, Բ.Ը.ոյ. եր. 11—15. հոս երկար դիտողութիւններ ընել, հետաքրքիր ընթերցողը կրնայ երկու թղթերն իրարու հետ բաղդատելով բացորոշ տեսնել, թէ ո՛վ աւելի չափաւոր և իրաւացի փաստերով կգրէ, ընդհանուր ժողո՞վը թէ մեք։

Միայն թէ Վանահօր մեր վրայ յօդած այս նոր ամբաստանութեան անտեղի ըլլալուն վրայ ընթերցողաց դաղափար մը տալու համար կարեւոր կհամարինք ըսել նախ՝ որ մենք այս փոխանորդական պաշտօնը դեռ չստանձնած 'ի Պոլիս ժամադիր եղած էինք հոգելոյս վանահօր հետ որոշեալ տեղ մը այս խնդրոյն վրայ իրարու հետ խօսակցելու և իրմէն հրա-

*, Հոյ. պատմ. չամչ. հատ. Բ. եր. 574։

ման առնելու համար, բայց անհնար եղեր էր որոշեալ ժամադրութեան զիրար տեսնել, ինչպէս որ մեր առ վանական ժողովն գրած թղթոյն մէջ ալ յայտներ էինք, և ինքն ալ չէր հերքեր զայս, Բ-ՂԻ. եր. 19. ասով մեր ընթացքը այս մասին անվայելուչ և անկանոն, իշխանութեան դէմ անսաստութիւն և անուշադրութիւն չէր ըլլար, ինչպէս ընդհանուր ժողովը իր թղթոյն վերջը մեր բերանը կդնէ խոստովանիլ, և նոյնը կապասեն եղեր մեզմէ չորս վարդապետք ալ, Բ-ՂԻ. եր. 12. 16. հետեւաբար վանահայրը այս միջոցին մեր վրայ օրինազանցութիւն դտնելու հետամուտ, թէ որ աս անցքին մէջ դտած կկարծէր՝ ան ալ մեր վերոյիշեալ ազդարարութենէն մանրամաղ փոշիներու պէս վարուելով յօդս կցնդէր։

Երկրորդ՝ Վանահայրը մեզ ամբաստաներ է վանական ժողովոյն առջև, և թուղթը ստորագրող վարդապետք ալ հաստատեր են՝ թէ մենք Վանահօր հրամանին և իշխանութեան անսաստելու նշանակեալ մտադրութիւն մ՚ունինք եղեր. և ասոր ապացոյց կբերէ Վանահայրը ի խնդրոյ Նիկողայոս Եպիսկոպոսի Կէյվէյի գիւղերը խրկելու առաջարկութեան չհաւանելնիս. վարդապետներն ալ կըսեն՝ թէ երբ Վանահայրը Ներսէս Սրբազանի փոխանորդի պաշտօնով Աստուածաշունչ խրկել կուզէ եղեր մեզ, չենք գացեր. տե՛ս Բ-ՂԻ. եր. 11. 44։ Վարդապետաց ամբաստանութեան վրայ խօսելու տեղը յաջորդ դլխոյն մէջ է. առաջինին համար ալ կըսենք՝ թէ այն հրամանը մեզի ընելու ատեն Վանահայրը երկու անդամ կրկնեց՝ թէ «երթաս նէ՝ կխրկեմ»։ Աս առաջարկութեան ձևը Նիկողայոս Եպիսկոպոսի և իր մէջ ծագած դժտութեան ծնունդն էր։ Վանահօր մը միաբանի մը «երթաս նէ՝ կխրկեմ» ըսելուն բնական պատասխանը չեմ կըրնար երթալ» կըլլայ. իմացուց Նիկողայոս Սրբազանին՝ թէ Պօղոս վարդապետը «չեմ կրնար երթալ» կըսէ։ Արդ ան ատենը իր առաջարկին զօրութեամբ մեզի այնպէս ըսել տալ, և ապա ելլել վանական ժողովոյ մէջ ամբաստանութեան նիւթ ընելով զայս բողոքել մեզի համար՝ թէ իր հրամանին

անսաստեր ենք, ի՞նչ ձևեր են ասոնք՝ չենք գիտեր։ Վանահայրը և վարդապետք աս մասին վերոյիշեալներէն զատ ուրիշ ապացոյց բերած չըլլալուն համար՝ մենք ալ առ այժմ աս կէտին վրայ ուրիշ ըսելիք մը չենք ունենար. բաւական կհամարինք հանրական կերպով ըսել միայն՝ թէ Վանահօր իշխանութեան անսաստելու այդ կեղտ անունը և ո՛չ մէկ ատեն մը յանձն չենք առներ երբէք. մենք վերջին հոդելոյս Վանահօրմէն զատ ուրիշ երկու պատուական Վանահարց ալ ծառայեր ենք, և անցեալը ներկային հայելին է։

Երրորդ՝ աս իրողութեան մէջ Վանահօր և վանական ժողովոյ ծանր եկածը Նիկոմիդիոյ պատրիարգական փոխանորդ Նիկողայոս Եպիսկոպոսի իշխանութեան տակ և անոր վիճակին մէջ գտնուելնիս էր, որոյ հետ՝ ինչպէս վերն ըսինք՝ ի վաղուց հետէ դժտած էր վանահայրը։ Ան ատենները Նիկողայոս Եպիսկոպոսը պատրիարգական փոխանորդութենէ տապալելու համար պատրաստուած յատակագծին համեմատ Աստուածաշունչ առ Պատրիարգարանն ուղղած հանրագրոյն, որուն պարագաներն խպառ անծանօթ չէին մեզի, իմաստին նպաստաւոր չէր համարուեր մեր փոխանորդութեամբ Աստուածաշունչ նստիլը։ Ասոր համար է՝ որ Վանահայրը և վանական ժողովը իրենց գրերուն մէջ տեղ տեղ Նիկողայոս Եպիսկոպոսի իշխանութեան տակ մտնելնիս յաւօք սրտի երեսնիս կդարձնեն։ Ասոր համար էր՝ որ Աստուածաշունչ, կամ տիրապէս խօսելով Աստուածաշունչ վանքին բարեկամ կարծուած մասը ան ատենը մեր անէն և վարդապետներն ընդունեցին, փոխանորդական պարծանքս չընդունեցին։ Թէ որ ժամանակին աս պարագայները չըլլային, կամ Նիկոմիդիայէն դուրս ուրիշ վիճակ մը դտած ըլլայինք, հաւանականաբար ոչ մեր հոս կամ հոն երթալը, ո՛չ յանձնարարութեան պայմանի փոփոխութիւն, և ոչ օրինաց խանդարմունք Վանահօր և վանականաց ամենեին փոյթը չէր ըլլար, և մենք ալ իրենց արձանագրութեանց և թղթոց մէջ տարապարտ տեղը այնչափ անախորժ մակդիրներու չէինք արժանանար։

Ա.ս միջոցին Խորէն վարդապետը Պոլիս գացած ատենը մեզի ուղղեալ նամակ մը կառնէ Ձեր Ա.մենապատիւ Սրբանութենէն՝ 1870. դեկտեմբեր. 24 թուականին գրուած, նամակ մը՝ որուն օրինակը առաջին անգամ վարդապետաց թղթոյն 16 երրորդ երեսին մէջ կարդացինք, և որոյ բնագիրը մինչեւ 1873. յուլիս. 30. ներկայ թուականս, երկու տարի ու կէսէ 'ի վեր տակաւին ընդունելու պատիւը ունեցած չենք։ Եւ ի՞նչ երեսով կարող պիտի ըլլային մեզի յանձնել այնպիսի թուղթ մը, որուն պարունակութիւնը յայտնի կցցընէր՝ որ ներկայ անցքերը ուշադնուն պէս խեղաթիւրելով հասկցուցեր էին Ձեր Սրբազնութեան, որոց ստութիւնը պատասխանով մը նշանակելու առիթ չտալու համար մեզի՝ թուղթը մեզի յանձնելէ կզգուշանան։ Ի՞նչ անիրաւութիւն, մանաւանդ թէ ի՞նչ թղթաբերական անհաւատարմութիւն, աւելի գէշն ա՛ս է որ իբրև Պատրիարգ Սրբազանի մեզի խրկած զգուշացուցիչ նամակ ցցընելով զայն իրենց ընթերցողաց, գոնէ զայն մեր ձեռքը չհասցընելին խոստովանելու քաջութիւնը չեն ունենար 'ի քաւութեան իրենց անհաւատարմութեան։ Բայց մենք ա՛ս մասին զգացած մեր խորին ցաւոց հակառակ կմխիթարուինք մտածելով՝ որ նոյն իսկ Պատրիարգ Սրբազան Հօր ա՛ս թուղթը մեզի չյանձնելին մեր վրայօք Նորին Սրբազնութեան տուած անստոյգ տեղեկութիւններուն անբարբառ ցրում մըն է։

Թուղթը ստորագրող վարդապետը ա՛ս նամակին մէջ Սրբազան Պատրիարգ Հօր «երբ ձեր խնդրանօք Նիկոմիդիոյ առաջնորդութեան իբրև օդնական խրկեցինք զՁեր Սիրելութիւնը» ըսելուն, և մեր դրոյն մէջ «յերկիցս խնդրելոյ Նիկոմիդացի երեւելեաց ոմանց» ըսելնուս մէջ հակառակութիւն մը և մեր կողմանէ ստախօսութիւն մը նշմարեր են, և ա՛ս առթիւ ստախօսութեան դէմ բարոյական դաս ալ խօսեր են մեզի. «Ե՛ն 'ի Բ.ԷՂԻ. Եր. 17։ Երկու ասացուածներն ալ ըստոյգ են անհակառակելի կերպով, Սրբազան Պատրիարգ Հօր Ձեր ԻՆԴՐԱՆՕՔ ըսելը ստոյգ է, որովհետեւ Նիկոմիդացի

երեւելիք այնպէս հասկցուցեր են Նորին Սրբազնութեան՝ թէ մենք ենք Նիկոմիդիա երթալ խնդրողը, և Սրբազան Հայրն ալ լսածին պէս գրելու իրաւունք ունէր. մեր յերկիցս ԽՆԴՐԵԼՈՅ Նիկոմիդացի երեւելեաց ոմանց գրելն ալ ստոյգ է, վասն զի նոյն Նիկոմիդացի երեւելիք երկու անգամ յատկապէս Սրբազան Պատրիարգին երթալով խնդրեր էին՝ որ նոյն վիճակի առաջնորդութեան օդնականի պաշտօնը մեզի յանձնուի։ Իրաց ստուգութիւնն ա՛ս ըլլալով՝ վարդապետաց ա՛ս երկու ատութեան մէջ նկատած հակառակութիւնը առերեւութական կըլլայ, և ստախօսութեան դէմ ա՛ն բարոյական դասախօսութեան պէտքն ալ մեզի չպատկանիր։

Վանական ընդհանուր ժողովը վերջապէս զգալով մեր իրաւացի փաստին զօրութիւնը, որով աստուածային և վանական օրինաց վրայ յենլով կցցընէինք մեր թղթոյն մէջ՝ թէ կանոնական անհնարին զանցառութիւն էր առանց նախապէս Վանահօր կամ Տնօրէն ժողովոյ միջոցաւ 'ի պատասխանատուութիւն հրաւիրելու մեկէն ընդհանուր ժողովոյ ատեանն հանել զմեզ, թղթակցութիւնն ընդհատելով թողուցեր էր որ Վանահայրը՝ նամակաւ մը վանք հրաւիրէ մեզ։

Վանահօր ա՛ս հրաւիրանաց՝ մանաւանդ թէ նողկալի թշնամանաց և նախատանաց նամակը 'ի Սապանճա ընդունելնիք Ա.տափաղար երթալու ատենիս, նամակ մը՝ որ եթէ յանցուցելոյ մը յանդիմանութիւն և զգուշութեան խրատ ըլլալու մտօք գրուած էր, ա՛ս նպատակին չափաւորութեան սահմանէն 'ի բաց վաղելով՝ սկիզբէն մինչեւ վերջը ուղղակի և անուղղակի անտանելի թշնամանաց, երդիծանաց և ծաղրածութեանց տարափներ կտեղար անխնայ մեր վրայ։ Տրտմաւոր նամակ, ոչ թէ անոր համար՝ որ անոր արձակած նախատանաց սլաքներուն նպատակը մենք էինք, այլ զի 'ի վերոյ տանեաց չրջելու՝ և այնչափ վանական հոգիներու հեղութեան և ամեն առաքինութեանց տիպար ըլլալու ասպիճանին բարձրացող վանահայր մը՝ տակաւին կոթին և ո՛չ հաստատուն կերակրոյ ինքզինքը կարօտ ցցընելու չափ՝ կղկանէր

իր դրչին ծայրէն այնչափ կրից ծայրայեղութիւն, այնչափ հին մարդոյ գործքեր դուրս տալ 'ի գայթակղութիւն ընթերցողացն. յօրինակ չար իր թեւոյ տակ կրօնաւորող ամեն ասոտիճանի միաբաններուն։

Ա.յս բիւր ստգտանաց արժանի թղթոյն յիշատակաւը մեր միտքը չտանջելու համար անոր պարունակութեան վրայէն առանց դիտողութեան կանցնինք. ընթերցողը կրնայ մեր այս գլխոյ մէջ գրածներուն և ընդհանուր ժողովոյ խրկած դիրերնուս մէջ, որ կտեսնուի 'ի Ռ-ՂԾ. եր. 12. անոր լիակատար ցրումը գտնել։

Գալով անոր պատասխանոյն, իր նամակին պարունակած ծանր ծանր մակդիրներէն շատերը մեր թղթոյն սկիզբը յիշեցնէս ետքը՝ թերևս անոնց վրայ իր մտաց ստգտանք մը առթելու յուսով, մեացածներուն ալ մէկ մասին պատասխանը ընդունելու համար առ վանական ժողովն գրած թղթերնուս կխրկէինք զինքը, մէկ մասն ալ վանք գացած ատեննիս բերան առ բերան խօսելու թողած էինք. որովհետև չէինք ուզեր ա՛յլ ևս թղթակցութեան մտնել այնպիսի անձի մը հետ, որ հանդարտութեան ատեն որչափ զգաստ էր իր խօսքերուն մէջ և բերաններնէն տգեղ բառ մը հանող միաբանները կասստէր, այնչափ ալ ինք ընդ հակառակն բարկութեան ատեն չէր գիտէր դրչին և լեզուին սանձ և համ դնել։ Վանքն ալ ան օրերը երթալու անկարող ըլլալնիս կը-ծանուցանէինք մէկ քանի պատճառաւ, մէկ մը՝ որ Սապանճայի տաճկաց ոմանց հետ դատ ունէինք ան օրերը՝ անոնց տղայոց 'ի մեզ քարաձիգ ըլլալուն համար 'ի Սապանճա, մէկալ ցցուցած պատճառներնուս մէկն ալ էր ապաշխարութեան այն մօտակայ օրերուն մէջ մեր վարդապետական, պաշտաման պարտքը, և կխոստանայինք ծննդեան տօնէն ետեւ անյապաղ երթալ։ Բայց մեր չորս վարդապետք շահասիրութեան կեղտ անուն մը մեր վրայ քսել մտադիր ըլլալնուն համար՝ ասոնց երկու պատճառներէն առաջինը մեկդի նետելով՝ որ իրենց ըսելիքին ոյժը կկոտրէր, և միայն երկրորդը իբրև

իրենց նպաստաւոր առնելով՝ թիւրիմաց մեկնութեամբ կըսեն թէ իր նպատակը ծննդեան օրերը Ա.տափաղար ստակ շահիլ էր, որպէս թէ ուրիշ ատեն և թէ՛ մեզ թէ՝ ուրիշ միաբաններ տաղաւարի օրեր Ա.տափաղար կամ՝ ուրիշ տեղ խրկած ատեննին շահասիրութիւն սորվեցընել էր դիտաւորութիւններն, և ո՛չ թէ հաւատացեալները ըստ կարի շինել և հաստատել 'ի Տէր։

Ծննդեան տօնը Ա.տափաղար անցնելնէս և Նիկողայոս Եպիսկոպոսը 'ի Նիկոմիդիա մի անգամ տեսնելնէս ետքը վանք վերադարձանք ըստ վերոյիշեալ մեր խոստման։

Ա.յս է ահա, Սրբազան Տէր, և Հարք և Տեարք, թղթոյ մէջ առանձինն մեր նկատմամբ հրատարակուած իրողութեանց ստոյգ պատմութիւնը, զոր չորս վարդապետք այնչափ խանգարեր, այլագուներ են 'ի շնորհս Վանահօր։ Իրենք աս իրողութիւնները մեր կշիռը ներկայացընող դերը անուաներ են, ուշադիր ընթերցողը կրնայ ակներև տեսնել՝ մի՞ թէ իրենց կշիռը ներկայացընող դերն են եղեր անոնք, դեր մը՝ որով իրենց կողմնասէր բարուց, դատաւորական անկարողութեան և կանոնաղանցութեանց տխուր փորձերը կուտան, և վանահօր մը հաճոյքը դգուելու և յաղթասիրական կիրքը գոհ ընելու համար ճշմարտասիրութեան պէս նուիրական առաքինութիւն մը ոտքի տակ առնելու հակամէտ ըլլալնին յայտնեցին։

Բ

ՄԵՐ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐԸ.

Նախընթաց գլխոյն մէջ պատմուած իրողութիւնք մեր անհատական ճիգերն էին միայն վանաց սահմանին մէջ 'ի գործ դրուած. սակէց ետքը կուգան Ստեփան և Յակոբ վարդապետաց և մեր միաբանական բողոքարկութիւններն առ ազգային ձեռնհաս ժողովս։

Այս բողոքները, որոց վերջինը Մանղամէ լրագրոյ 1841 երրորդ թերթին մէջ հրատարակուած տեսնուեցաւ, լուսահոգի Վանահօր յումպէտս և տարաժամ ըրած ծախուց, տպարանին հաշուոյն մինչև ցարդ խաւարին վիճակի մէջ թաղուած մնալուն, և միաբաններէն ոմանց նկատմամբ գործած անհաճոյ մատնաւորութեանց վրայ ազգային ժողովոյ խորին ուշադրութիւնը կհրաւիրեին։ Այսոց վրայ իրաւամբ կրնանք աւելցընել կանոնադրութեան վերաքննութեան խնդիրն ալ, խնդիր մը՝ զոր ո՛չ այնչափ վերաքննութեան, որչափ վանուց և միաբանութեան ներքին և արտաքին բարեկարգութեան տապալման խնդիր կոչել իրաւացի և ճիշտ է։ Թողունք՝ որ հոգելոյս Վանահայրը, ինչպէս նախորդ գլխոյն մէջ ցոյցնինք, կանոնադրութեան պահպանութեան մէջ անխոտոր չէր, 1871 ին սկիզբները, մինչդեռ մենք հիւանդութեան անկողին ինկած կգտնուէինք, անփոյթ կանոնադրութեան մը առիվերջական գործոց ու—յաջող ընթացքը պարտաւոր առնելով Վանահայրը՝ կըսեն չորս վարդապետք 'ի Ռոդոսն եր. 26. կանոնին վերաքննութիւն մը ընել առաջարկեր և ընդունել տուեր էր միաբանութեան։ Առաջարկութիւնը օրինաւոր, և նոյն իսկ կանոնադրոյն տրամադրութենէն էր. սակայն միթէ օրինաւոր և հարկաւոր չէ՞ր նոյնպէս վերաքննութեան աս միջոցին վանական ներքին և արտաքին գործոց տեսչութեան համար առ-ժամանակեայ Տնօրէն ժողով մ'ընտրել կանոնին նախկին ընթացքովը, օրինաւոր և հարկաւոր չէ՞ր նորոգ պաշտօնակալներ կարգել հինգ երեւելի պաշտօններու առ-ժամանակեայ տեսչութեան համար, և 'ի ձեռին դտնուած կանոնադրութիւնն ըստ առաջին կարգի գործադրելի համարել և այնպէս հրատարակել միաբանութեան՝ մինչև ցյայնորդութիւն նորոյն։ Այսպէս չէր ըրած Վանահայրը. կանոնադրոյն վերաքննութեան ենթարկուելովը որպէս թէ անոր գործադրութեան խափանումը վճռուած ըլլար, ո՛չ Տնօրէն ժողով ընտրել տուած էր և ո՛չ պաշտօնակալներ. Տնօրէն ժողովոյ գործն ալ պաշտօնակալաց գործերն ալ միայնակ իր ձեռքն առեր էր։ Վերաքննութիւնն ըսես, մինչդեռ իր ամենակարեւոր նկատել տուած պատճառին զօրութեամբ, կանոնին անփորձ՝ և անոր համար վարչական—գործոց ընթացքը ո՛չ—յայոդ ըլլալուն համար կըսեմ, աւելի արագութեամբ հարկ էր առաջ տանիլ անոր քննութեան գործը, որպէս զի վանքը կարող ըլլար օր յառաջ փորձ կանոնադրութիւն մը և վարչական գործոց յայոդ ընթացք մ' ունենալ, դժբաղդաբար կարծես թէ զայն տապալելու իբր պատեհ միջոց մը կծառայեր Վանահօր ձեռքը. ալ այնուհետև մուցեր էր Վանահայրը Պօլիս երթալու առենը միաբանութեան ըրած այն պատուէրը՝ թէ «իւրաքանչիւր միաբան կանոնադրութիւնը թող ուշի ուշով քննէ, խեղբին հասած չափով դիտողութիւն ները դրի վրայ առնէ, և երբոր դառնայ դայ՝ բոլորին առանձին դիտողութիւնները հաւաքելով հասարակաբար ամենուն ուշադրութիւնը կրող լաւ և բարեկարգ կանոնադրութիւն մ'ունենանք», Ռոդ. եր. 27. 'ի դարձին 'ի Պօլսոյ ո՛չ դիտողութիւն ուղղող կար, և ո՛չ դիտողութիւն ներկայացընող, ինքը Պօլիսէն կդառնար առանց միաբանից և ո՛չ մեկուն դիտութեան ըրած մեծագումար փոխառութիւնով մը՝ լսածնուս նայելով, դեռ Պօլիս դտնուած առենն ալ իր փո-

խանորդ Միքայէլ վարդապետին հրահանգ խրկած էր վանքին ադաքակէն մեծկակ առուծախ մ՚ընել, զոր առանց Տնօրէն ժողովոյ լնել թոյլ չէր տար կանոնադիրը։ Մէկ խօսքով, 1871 ին սկիզբէն մինչև նոյն տարւոյ յուլիս ամիսը, եւ անկէ ալ՝ շատ հաւանական է՝ որ մինչեւ 1872 ին վերջերը, որ իր կենաց վախճանին թուականն է, առանց օրինաց, առանց ժողովոյ և առանց պաշտօնակալաց աղիկամի և ինքնօրէն վարչութեան մը մասնուած էին առ հասարակ վանքը և միաբանութիւնը։

Ս.յսպիսի չարաշուք վիճակի վերածուած էին տհա իրերը, երբ հոգելոյս Վանահայրը 'ի Պոլիս և 'ի Պրուսա բացակայ դանուելով իր տեղապահ—փոխանորդ Միքայէլ վարդապետը Վանահօր միակ սիրելի Խորէն և Ներսէս վարդապետաց ո՛չ—պաշտօնական խորհրդակցութեամբ կկառավարէր վանքը, այնպէս որ երթալով աս երեք վարդապետը ուրիշ միաբաններէն բոլորովին կղզիացեալ դիրք մ՚ունեցան գործառնութեանց մէջ, վայելից մէջ, կենաց կցորդութեանց մէջ, վերջապէս ընկերային և տեսչական ամեն յարաբերութեանց մասին։

Ս.ս միջոցին Գերապատիւ Ներսէս Սրբազան առաջնորդական պաշտօնով Նիկոմիդիա եկած ըլլալով, Փոխանորդ Միքայէլ վարդապետն իր երկու խորհրդակցաց դիտութեամբ միայն իբր 'ի դիմաց համօրէն միաբանութեան շնորհաւորութեան դիր և երեսփոխան խրկեր էր Նորին Սրբազնութեան։ Ս.ս մասնաւորութեան վրայ ցաւելով՝ ուրիշ շնորհաւորութեան դիր մ՚ալ առանձինն Ստեփան և Յակոբ վարդապետք և մեք խրկեցինք Ներսէս Սրբազանի։ Անպատե՛հ բան արդարև, ցաւալի է՝ որ պատճառը վերոյիշեալ վարդապետք տուած էին իրենց աւելի անպատեհ անյատուութիւններովը միաբանութեան մարմինէն։

Իրաց աս տխուր վիճակէն խոր կերպով զդածուելով Ստեփան և Յակոբ վարդապետք և մեք, կմտածէինք՝ թէ ինչ միջոց կրնայինք 'ի գործ դնել միաբանութեան և վանաց

այս ցաւալի վիճակին կատարեալ բարւոքման համար։

Վանահօր Պոլիսէն դառնալուն ուղղակի իրեն բողոքել և դարման խնդրել անօգուտ ըլլալուն ամենքս ալ լաւ համոզուած էինք, աս միջոցը արդէն քանի՛ քանի՛ անգամ փորձուած, բայց դժբաղդաբար 'ի դերև եղած էր։

Թուղթը ստորագրող չորս վարդապետք Ստեփան վարդապետին և մեր կողքը Ներքոյացեալ դերբն ստորագրեցեան (իրենց խելքովը) գլխոյն սկիզբը երկուքիս վանքին մէջ վարած պաշտօնները և Տնօրէն և ընդհանուր ժողովոյ անդամակցութիւնները նշանակելով կդիտեն՝ թէ վանքին մէջ յառաջադիմութիւն և բարեկարգութիւն գործելու համար երեւելի և կարեւոր դիրք մը՝ և Տնօրէն ժողովոյ մէջ ալ Վանահօր մէկ ձայնին դէմ երկուքս մէկտեղ երկու ձայն ունենալնուս համար կրնանք եղեր անոնց զօրութեամբ իրաց ուղղութեան դարման տանիլ, և չտարած ատեննիս ալ եղած նիւթական և բարոյական ցնասուց պատասխանատուութեան մէկ բաժինը միայն վանահօր, իսկ երկուքը մեզի կպատկանի եղեր. Բ-ՂԸ. Եր. 3. 22։ Ս.ս մոօք երկարաբանութիւններ ըրած են նաեւ այլուր. 'Ի Բ-ՂԸ. Եր. 40։

Վարդապետաց աս դիտողութիւններն անտեղի են, եւ կանոնական հարեւանցի ակնարկ մը կրնայ զանոնք հիմնովին տապալել։ Վանքին մէջ վարած պաշտօններնուս զօրութեամբ մեր ստացած դիրքը, թէ՛ և 'ի վերջոյ պաշտօնակալութեանց բարձմամբ այն կարեւոր եւ երեւելի կոչուած դիրքերնիս ալ խախտեցաւ, չէր կրնար իրաց ուղղութեան համար մեզի նպաստաւոր ըլլալ, վասն զի վերջապէս ի՛նչ աստիճանի ալ ըլլար այն՝ կարեւոր թէ անկարեւոր, պաշտօնակալաց նկատմամբ ընդունուած կանոնական անմիջամտութեան սկզբունքը՝ որով պաշտօնակալ մը աղատ և անկախ ո՛ր և է մասնական միջամտութենէ՝ ուղղակի Տնօրէն ժողովոյ պատասխանատուութեան ներքեւ կգործէր, թոյլ չէր տար մեզ Վանահօր գործողութեանց ասպարէզին միջամուխ և խափանարար ըլլալ. ասիկայ փոխանակ ուղղութիւն և բարեկարգութիւն

առաջ բերելու կրնար առաւել եւս աղմուկներու և ամբաստանութեանց առիթ ըլլալ։ Այս կնար միայն թէ մեր պաշտամանց նկատմամբ և թէ ուրիշ կողմանէ տեղի տրուած անկարգութիւնները խափանելու և իրերն 'ի կարգ բերելու համար Տնօրէն և ընդհանուր ժողովոց միջամտութեան դիմել օրինաւորապէս։ Տնօրէն ժողովով չէր հնար աս բարերար արդիւնքը ձեռք բերել. որովհետև թէ՛ եւ յիրաւի՛ մեք երկուքս 'ի միասին երկու ձայն ունէինք նոյն ժողովոյն մէջ, բայց անդին ալ Վանահայրը իր մէկ ձայնին հետ (թէ՛ եւ ինքը իբրեւ Վանահայր եւ նախագահ երկուք ունենալ կարէր) յամենայնի ընկերացած ունենալով Միքայէլ եւ Խորէն վարդապետաց ձայներն ալ, կրնար ուղածը ժողովոյն մէջ առաջ տանիլ, եւ արդեամբք կատներ ալ. հետեւաբար եթէ անոնց մասին ալ պատասխանատուութիւն մը կայ, Վանահօր հետ այդ երկու վարդապետաց վրայ կծանրանայ այն, եւ մեղի համար պատասխանատուութիւն, պատասխանատուութեան երկու բաժին, կէս բաժին անհնար է մնացել Իրաց կարգաւորութիւնը վանական ընդհանուր ժողովն ըստ պատեն ալ սին ակնկալութիւն մ'ըլլալը նախորդ դիպոյ մէջ պատմուած անցքերէն տեսնելով՝ ա՛լ ի՞նչ կնար մեղ ընել իբրեւ մեր հայրենի Տան ճշմարիտ օգտին եւ յառաջադիմութեան անկեղծութեամբ ցանկացողներ։—բողոքել Ազգային կեդրոնական Վարչութեան, եւ անոր ուշադրութիւնն արթնցընել իրաց դարմանին վրայ։ Այո՛, աս եւ միայն աս ըրինք մեք երեքս ալ միաձայն եւ համակամ, ասկէց դուրս չորս վարդապետաց թղթոյն մէջ պատմուած անցքերն անհատական են, իրաւացի կամ անիրաւ՝ գործողներուն առանձին պատասխանատուութեան ներքեւ ըլլալով։ Բայց մեր այս հանրական բողոքարկութեան պատմութիւնը չըրած՝ մեր Աստուածաշունչ փոխանորդ կարդուելուն, որոյ համար նախորդ դիպոյն մէջ խօսք ալ եղաւ, եւ Գերապատիւ Ներսէս Սրբազանի վանք յայցելութիւն դալուն անցքը պատմելու տեղն է հոս։

Հոգեբոյս Վանահայրը Պոլիս եւ Պրուսա ըրած ճամբորդութենէն վանք դառնալէն* երկու երեք օր ետքը գիս առանձինն իր սենեակը կանչելով, ուր ներկայ էր միայն Խորէն վարդապետը, հրամայեց՝ որ անմիջապէս Նիկոմիդիոյ վիճակին մէկ կողմը երթամ փոխանորդի պաշտօնով այս մասին Ներսէս Սրբազանի իրեն ըրած առաջարկութիւնը առջեւս դնելով, Պատասխանեցի՝ թէ իր հրամանը պիրով կատարելու պատրաստ էի, բայց երկարատեւ հիւանդութեան մը անկողնէն նոր ելած եւ տակաւին զգուշութեանց կարօտ ըլլալով՝ քիչ մը ատեն թոյլտուութիւն ըլլայ ինձ վանք մնալու՝ մինչեւ առողջութիւնս կատարելապէս գտնէի։ Գիս առանց ժամանակ անցընելու վանքէն ճամբու դնելու համար քանի մը համոզիչ խօսքեր ընելէն ետեւ վերոյիշեալ խնդիրը կրկնելը տեսնելով՝ յանկարծ 'ի բարկութիւն բրդեցաւ, եւ առաջարկեց ինձ՝ որ «եթէ հիւանդ եմ՝ փրկիչ երթամ, որովհետեւ վանքը հիւանդանոց չէ»։ Միաբանութեան բարեխնամ եւ գթած Հօր պաշտօն ստանձնող գլխոյ մը բերանէն ելած այս դառն խօսքը կարեւոր ցաւ առթելով ինձ յայտնեցի իրեն՝ թէ որչափ արտմեցուցեր էր գիս այն փրկիչ երթալու համար ըրած առաջարկութիւնը, մինչդեռ կային միաբաններ եւ նոյն իսկ ինքը, որոնց համար մշանջենաւոր հիւանդանոց մը դարձեր էր վանքը, եւ սակայն իմ եռամեայ մի անգամ եւ եթ հիւանդութենէս կատարելապէս կաղդուրելու համար քանի մը օր վանք մնալու թոյլտուութիւն պահանջելս գիս 'ի փրկիչ հրաւիրելու չափ ճանձրալի երեւցեր էր իրեն։ Եւ դարձեալ կրկնելով առ ժամն դուրս ելլելու անկարող ըլլալս՝ ոտքի վրայ ելայ, հարցուցի՝ թէ ուրիշ ըսելիք ունիք, ո՛չ պատասխանեց, խոնարհութիւն ընելով դուրս ելայ։

---

*. Վանահայրը վանք դառնալուն զգացեր է եղեր միաբանից մէկ մասին մէջ ծագած դժգոհութիւնները, մանաւանդ թէ Միքայէլ վարդապետը, իր պատմութեան նայելով, զգացուցեր է եղեր զանոնք Վանահօր, բայց թուղթը ստորագրող վարդապետը կրսեն՝ թէ ընաւ բան մը չզգացածի պէս իր ընթացքը կշարունակէր ըստ առաջին կարգի։ Բաղդ. եր. 41։

Այս անդրն է ահա, որոյ մէջ «հիւանդութենէ դեռ կատարելապէս առողջացած չենք» խօսքերնիս լուսահոգի Վանահայրը եւ շրջերին վանական Հարք պոր 'ի պոր պարհանուէ, ինդիր, ոդեյիան և անհիմն պարրուակ և Վանահօր հրամանին բաց 'ի բաց մերժում կանուանեն. մանաւանդ Վանահայրը մեր ըսած խօսքերը այլ ընդ այլոյ եղանակաւ պատմելով թշնամիներուն բաւերով նախատակոծ կընէ մեզ դերապատիւ Ներսէս Սրբազանի գրած նամակին մէջ. Բ-ՈՒՂ. եր. 45։ Որչափ անգութ եւ պատճառախնդիր է ատելութիւնը, իր ատելուոյն ողորմելի վիճակին անդամ չխնայեր, անոր տկարութիւնը կեղծիք եւ անհիմն պատրուակ կառդնէ, օրինաւոր պատասխանին մէջ լրբութիւն, եւ իրաւացի խնդրոյն մէջ իր գլխոյն անսասանելու նշանակեալ մտադրութիւն կտեսնէ։ Սէրը ընդ հակառակն բոլորովին ասոր ներհակն ընել բնաւորեալ է։

Անցաւ աս դեպքին վրայ ամսօրեայ ժամանակ, և մենք ողորմութեամբ Տեառն հաստատուելով յառողջութիւն կտեսնէինք՝ որ Վանահայրը ամիս մը առաջ ըրած հրամանը դորժադրելու այլ ևս դիտաւորութիւն չունէր, հրաման խնդրեցինք երմէն Պօլիս երթալու՝ մեր 'ի հօրէ որբացեալ անոք եղբօրորդւոյն, որ աչացաւի հիւանդութեան դարմանին համար աղդային Հիւանդանոցը կկենար ժամանակէ մը 'ի վեր, այցելութիւն մ'ընելու պատճառաւ. բայց շոգենաւին մէջ Պոլիս դացող ազդայինէ մը լսելով՝ որ բաւական ապաքինեալ գիւղը խրկուեր է Հիւանդանոցի Տեսչութեան միջոցաւ, Գարամուսալէն եւս դարձանք։ Ցաւալի է որ չորս վարդապետք մեր աս նպատակաւ ըրած ճամբորդութեան անձնական շերամի դործ պատճառ կուտան. Բ-ՈՒՂ. եր. 46։ Անձնական շերամի դործ ըսածնին՝ մեր հօրմէն ժառանգութեամբ ստացած 30 կամ 40 տրամի չափ շերամ պահող թթենաստան մը եղբօրնուս յանձնած ենք* իր աղքատին կե-

*. Ըստ կանոնագրոյն վանաց. հայրենի ժառանգութիւնները ըստ կամի կարգադրելու ազատ է մէտարան մը. կանոն. Թ։

նաց պարէնը անկէ հայթայթելու համար՝ ան է. մեր վրայ շփել մոքերնին դրած շահասիրութեան կեղտ անունը տարուրագոյս մեզի պատճառեցընելու համար աս մտացածին վախճանը կուտան մեր ճամբորդութեան։ Աւելի ցաւալին այն է՝ որ լուսահոգի Վանահօր յայտնած ենք մեր ճանապարհորդութեան վերը ըսուած նպատակը, դարձեալ այնպէս գրել տուեր է վարդապետներուն։

'Ի դարձին 'ի Նիկոմիդիա Ատափազարու փոխանորդ կարդուելու առաջարկութիւն ըրաւ մեզ դեր. Ներսէս Սրբազան, որուն թէ՛ և հոն ալ հաւանեցանք, ինչպէս որ կանուխէն Վանահօր ալ այն կարդի հրամանին հպատակելիս յայտներ էինք, բայց անձնական դործերնիս կարդադրելու՝ մանաւանդ որ տիրապէս կէտ խորհրդոյ էր մեզ՝ Վանահօր հաճութիւնն ալ ստանալու համար վանք դարձանք. սակայն Վանահայրը ասոր համար իրմէն հրաման խնդրելու տրամադրութեան մէջ չտեսնելնուս քանի մը օրէն եւս դրեցինք դեր, Ներսէս Եպիսկոպոսին, թէ խոյս չենք տար մեզի առաջարկուած պաշտամանէն, սակայն ժամանակ մ'ալ վանք մնալ կհարկադրինք։

Ամիսէ մը եւս դրը. յուլիսի մէջ, դեր, Ներսէս Սրբազան յատուկ հրաւիրանօք վանք եկաւ. ուր, Ստեփան և Յակոբ վարդապետք Պոլիս դացած ըլլալով, մեք միայն կդտնուէինք ան օրերը։ Նորին Սրբազնութիւնն առանց մեզի առանձին հարցուած մ'ընելու, միայն յատենի, ուր ներկայ էին Վանահայրը, Միքայէլ և Խորէն վարդապետք, ո՛չ պաշտօնապէս լսելով մեր դժդոհութեան ինչ ինչ պատճառները, խաղաղասիրական ոգւով ստիպեց զմեզ, որ ելլենք Վանահօր աչն համբուրենք և հետը հաշտուինք։ Պատասխանեցինք՝ թէ մենք Վանահօր հետ անձնական թշնամութիւն մը չունենալով՝ պէտք էր նախապէս մեր դժդոհութեան նիւթերը վերցընել և խնդիրներն հաշտեցընել, որոց բոլորն ալ յայտնուելու և հիմնական և ամէն կողմէ ներդաշնակաւոր խաղաղութիւն մը հաստատելու համար Ստեփան և Յակոբ

վարդապետաց ներկայութիւնն ալ կարեւոր էր, որով որպէս թէ կառաջարկէին.՝ որ անմիջապէս զանոնք ալ կանչեն Պօլսէն։ Ա.հա մեր աս խաղաղասիրական և իրաւացի պատասխանին համար է որ չորեքին վարդապետք 'ի Ն-ՐՈՒՆ. Եր. 44. դեւի կնմանցընեն մեզ՝ գերդեսացի պիղծ այսերուն ըսածը մեր բերանը դնելով, «քանզի բազումք եմք»։ Մեզի թէ և շատ դիւրին էր այս տեղ նմանակցութիւնը չորս վարդապետներուն գլուխը պատշաճապէս շրջել. բայց մեր անձին եղած դժպհի թշնամանաց նմանօրինակ փոխարինութիւն ընելու ցածութեան խոնարհիլ չուզելով, Տեառն մերոյ հեզութեան մեր երկնաւոր տիպարին հետեւողութեամբ բաւական կհամարինք միայն ըսել, «յիս դեւ ոչ գոյ, այլ պատուեմ զԽաղաղարարն և զԵղբարս նմ, և դուք անարգէք զիս»*։ Թղթոյ շատ տողերուն մէջ ալ ինչանց հակառակ կկոչեն մեզ Եր.էս. ասոր ալ կպատասխանենք, որ մեք երեք վարդապետքս 'ի վաղուց հետէ իրարու հետ յաճախ կտեսնուէինք, և բնաւ մասնաւոր հակառակութիւն մը չունէինք մէկզմէկու հետ, սակայն ինչ ինդիրներու մէջ կարծեաց անհամաձայնութիւն Պօղոսի և Բառնաբասի՝ այն առաքելական արանց մէջ ալ ծագեցաւ, բայց ասոր համար ստոյգ չէ Պօղոսը և Բառնաբասը ինչանց հակառակ յորջորջել։ Ս.յսպիսի անվայել և թշնամական անուանակոչումները «բաժանեա, զի տիրեսցես» սկզբունքը գործադրելու անյաջողութենէն, ինչպէս վերջին երկու դէպքին մէջ տեսնուեցաւ, ծագած սրտնեղութեան դժպատեհ արդիւնքն են։

Ս.յս անցքէն ետեւ նոյն ժողովոյն մէջ գէր. Ներսէս Սրբազանի առաջարկութեամբ և հոգելոյս Վ.անահօր հաճութեամբ Ա.տափաղարու փոխ—առաջնորդ կարգուեցանք, որոյ հաստատութեան կոնդակն անմիջապէս ընդունելով 'ի գէր. Ներսէս Սրբազանէ՝ երկու երեք օրէն ետքը փութացինք մեր պաշտօնատեղին երթալ։ Նոյն օրը Ներսէս Սրբազանն ալ ուղեւորեցաւ 'ի Նիկոմիդիա։

*. Ցահ. Ը. 49։

Մեր Ա.տափաղար երթալէն ամիս մը ետքը Ատրիան և Ցակոբ վարդապետներն ալ հոն գալով, իրենց հայրենի տըներուն մէջ բնակութիւն հաստատեցին։ Ա.յն տեղ օգոստոս ամսոյ վերջերը երեքս միաձայն հաւանութեամբ բողոքագիր մը ստորագրելով Պատրիարքարան խրկեցինք, յորում Վ.անահօր վերոգրեալ արարքները յայտնելով ազգային վարչութեան ուշադրութիւնը կհրաւիրէինք անոնց դարմանին վրայ։ Զարմանալի է Վ.անահօր և իր չորս վարդապետաց շատ բաներու մէջ յայտնած դաղափարը. մեր ձայնը վանքին սահմանին մէջ իրենց մեծամասնութեամբը անլսելի կընէին, հիմայ ալ մեր այս օրինաւոր բողոքը ՀՐՈՒՆ ՊՈՊԱՐՈՅՆԵԼՈՅ ԱՐՊԱՍԱԼԷ ԱՆՄՈՌՈՒԼ ԿԱՆՈՒԱՆԵՆ ԸՆՈՅ 50 ՐԴ. ԵՐԵՍԻ ՎԵՐ։ Ուրեմն թող այսուհետեւ ա՛լ բնաւ մէկը օրինօք կարդեալ ատեաններու որ եւ իցէ անհարթութեան մը բարձման համար բողոք կամ խնդիր չընէ, որովհետեւ ըրածը, աս վարդապետներուն նայելով, չարութեան ստուարութիւն և արտասուելի անմտութիւն կըլլայ. որոյ հակառակը՝ իր բարութիւնը ըստուարացուցած և գովելի խոհականութիւն մ'ըրած կըլլայ մէկը՝ երբ եղածներուն վրայ ձայն չհանելով, Ինչ՝ ՊՆԱՑՔ ՅՈՐ ԽԱ 'Ի ԽԱՐԷ ՎԵՐԻ, ՈՐ ՈՒ ԽԱԿՈԵՑՔ ԿԸՍԷ, կնատի լռիկ մնիլիկ իր գործը կնայի։ Ա.սկէ աւելի աշխարհի և ընկերութեան շինութեան և բարեկարգութեան վտանգաւոր դաղափար կընա՞յ ըլլալ։

Ա.նցան վրան քանի մը ամիսներ, և տակաւին մեր բողոքագրոյն մէկ արդիւնքը չտեսնուելով, ստիպուեցանք, 1872. յունվարի սկիզբը, երկրորդ և աւելի մանրապատում ամբաստանագիր մ'ուղղել առ Քաղաքական ժողովն Նիկոմիդիոյ, այս կերպով մեր բողոքոյ ձայնը ազգային Վարչութեան քաջի ընելու յուսով։ Նիկոմիդիոյ Քաղաքական ժողովը, ինչպէս օրէն էր, Պօլսոյ Կեդրոնական Վարչութեան խրկեր էր մեր ամբաստանագիրը, պատճէնն ալ Մանդուռէի 1841 թուով հրատարակեալ տուած էր Ա.տափաղարցի մէկը, ինչպէս կըսեր լրագիրը։ Ա.յս հրատարակումը արտաքոյ մեր

գիտութեան և կամաց ըլլալով խորին ցաւ առթեց մեզ, ուստի նոյն լրագրոյն 1855 թուով թերթին մէջ նամակաւ մը մեղադրեցինք այն Աստիպաղարցի անձը, որ առանց մեր գիտութեան մասնաւոր ժողովի մը գրած նամակնիս հրապարակ հանելով մեր բարի նպատակին հրապարականախատ թշնամասիրութեան ձև տուաւ։

Խղճի ճշմարիտ թելադրութեան աս ձայնը վարդապետաց գրչին տակ օտարոտի մեկնութեանց խուժան մը յղացեր է տեսեր Ընդդէմ, 76. 77։ Ըսեր են՝ թէ մեր գրածը ճիշտ թագ սա բարոյական սկզբանց գործնական օրինակն է՝ թէ ինչպէս կամ ինչպիսի՞ պարտ վայ առանց տկնչոյ. կամ՝ հայհոյելն ու զրպարտելը երբոր քիչուորի առջև և ծածուկ կըլլայ, յանցանք չէ։ Ատոր կպատասխանենք. մեր բողոքագրոյն մէջ հայհոյութիւն և զրպարտութիւն չկենալով թէ քիչուորի առջև կարդացուէր և թէ չատուորի, թէ՛ ծածուկ մնար, և թէ՛ լրագրաց մէջ յայտնի հրապարակ ելլէր, միշտ մի և նոյն բանն էր ընդ ինքեան. մենք մէկ մը երկու եկեղեցական կողմերու հրապարակաւ իրարու դէմ գրելէն ծագելիք անպատուութեան և ժողովրդային գայթակղութեան վրայ կցաւէինք մէկ մ՚ալ սա ըսել կուզէինք՝ թէ ժողովոյ մէջ դեռ չքննուած նամակ մը հրապարակ հանելը գատաւորելոյն զրպարտուելոյ և թշնամանուելոյ ըսելու առիթ տալ էր, ինչպէս որ եղաւ ալ իրաք։ Ս. յսալիսի նպատակաւ գրուած թղթոյ մը իմաստին մէջ ճիշտ ճիշտ բարոյական սկզբանց գործնական օրինակ երեւակայելը մարդկութեան ամենամաքուր գաղափարին մէջ այն ամարդի գաղափար մտածելու պէս անհեթեթ բան մը չէ՞։

Շահասիրութիւն ալ տեսեր են մեր նամակին մէջ, որպէս թէ մենք Աստիպաղար բաղում դժուարութեամբ ձեռք բերած գոհացուցիչ ամսական շահերնէս պահ մը չհեռանալու համար Պոլիս երթալէ և բողոքագրոյն համար դատ վարելէ խոյս տալով հրատարակած ըլլանք զայն։ Թէ որ յիրաւի աս խորհրդով հրատարակած էինք այն նամակը, ինչո՞ւ ուրեմն ան ամսական գոհացուցիչ ըսուած շահերնուս վայելման

մէջ՝ և վարդապետաց թուղթը կարդալէ առաջ տեղերնէս շարժելով Պոլիս դիմեցինք Վանահօր հետ դատուելու համար, աւելի ընտրելով վանքին բարգաւաճանքը քան թէ մեր ամսական գոհացուցիչ շահը։ Ասկէց զատ թէ որ այդչափ շահասէր էինք, ի՞նչ հարկ կար մեղի վանքը չմնալ, Աստիպաղար երթալ փոխանորդութեան պաշտօնով. միթէ վանքի մէջ ուրիշ վարդապետաց պէս վանքէն ապրելով, վանքէն հագնելով, և վանքէն 60 դահեկան ամսական առնելով աւելի շահաւոր և հանդիստ չէի՞նք ըլլար քան թէ Աստիպաղար քանի մը հարիւր դահեկան ամսական առնելով, որ սա կաւապիտութեամբ հաղիւ մեր պաշտօնական և անձնական ծախքերուն կբաւէր, գործառնական ազգի ազգի զբաղմունքները և մտահոգութիւններն ալ աւելի՛, որոնցմէ ազատ կըլլան վանքերու մէջ բնակող վարդապետք։ Ըսել է՝ թէ որ մեր անձնական շահը նկատելով վանքին կործանումը կամ բարգաւաճանքը մեղի փոյթ չընելու չափ վիճակ մ՚ունէինք, ան ալ վանքին և ոչ թէ Աստիպաղարի մէջ վայելած վիճակնիս էր, և որովհետև մենք թէ վանքին շահաւոր և անդորր վիճակնուս՝ և թէ Աստիպաղարու անշահաւոր վիճակնուս մէջ վանքին կործանումը կամ բարգաւաճանքը փոյթ ըրինք մեղի՝ առաջինէն հրաժարելով Աստիպաղար երթալու առեննիս, երկրորդն ալ առ ոչինչ դրելով Պոլիս դատի համար դիմելու առեննիս, ըսել կըլլայ՝ թէ մենք 'ի շահաւոր և յանշահ վիճակի՝ 'ի նեղութեան և յանդորրու վանքին կործանումը կամ բարգաւաճանքը մեղի փոյթ կընենք, և մեր գործոց շարժառիթը շահասիրութիւնը չէ եղեր. հետեւաբար վարդապետաց թէ վերը գրուած խօսքը, և թէ անկէ քիչ մը առաջ մեղի համար ըսած աս խօսքը, Ընդդ. էջ. 76. «Եթէ աս բաղդը տարի մը յառաջ ձեռք ձգած ըլլար, իրեն ոչ վանքի կործանումն և ո՛չ բարգաւաճանք բնաւ հարկաւոր չէր». այն ասացուածներուն կարգը կմտնէ, որոնց համար իմաստուն մը երբեմն աղաղակեր է. «ո՛ւրչափ դանդաչանք քիչ խօսքերու մէջ»։

Ամիս մը ետքը, քառանորդական պահոց սկիզբը, Պատրիարքարանէն հրաւէր ընդունելով հոգելոյս Վանահօր հետ դատուելու համար՝ փութացինք երեքս մէկտեղ 'ի Պոլիս։

Ներկայացանք Քաղաքական ժողովոյ, որ մեր բողոքոյն կրօնական մասին քննութիւնը Կրօնական ժողովոյ, հաշուական մասին քննութիւնն ալ Տնտեսական խորհրդոյ յանձնուած ըլլալը ծանրոյց մեզ։ Դացինք Կրօնական ժողովին, որ քննութեան 'ի գործ դրուելուն որոշումը առաջիկայ նիստին ընել զեկոյց մեզ. երկու շաբաթի չափ ան կերպով սպասեցինք Պոլիս, սակայն Գէորգ եպիսկոպոսին առ Պատրիարքարանն ուղղած մէկ գրոյն պատճառաւ, յորում բժշկաց հրամանաւ խօսքին իրեն արգիլեալ ըլլալը կծանուցանէր, քննութիւնը ետ մնաց, և զատկի օրերն ալ վրայ եկած ըլլալուն՝ Պատրիարքարանի հրամանաւ ստիպուեցանք քննութեան գործը կախ թողլով տեղերնիս դառնալ։

Այս հիւանդութեան համար մենք ալ Գէորգ Եպիսկոպոսի և չորս վարդապետաց մեր հիւանդութեան համար ըսածին պէս կեղծիք մ'էր չենք ըսեր. ստուգիւ նա հիւծական դժնդակ ախտի մը ճիրաններուն մատնուած դեռ Վանահայր ընտրուելէ առաջ՝ օր ըստ օրէ կհիւծէր և կհալէր իր արդէն նիհար մարմինը, մինչ զի քանի մը ամիսէն յետոյ ստիպուեցաւ խստառ ձեռնթափ ըլլալ ամեն կառավարական հոգերէ. և վերջապէս նոյն 1872 տարին, Նոյ. 28ին իրիկունը իր մահկանացու կեանքը կնքեց 'ի հասակի գրեթէ երեսուն և ութ ամաց, չորս տարի և երեք ամսոյ չափ Վանահայրական իշխանութիւն վարելէն ետքը։

Գ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Այս վերնագրով թղթակցութեանց երկար շարք մը հրատարակած են թղթոյ մէջ չորս վարդապետք՝ Ներսէս և Գէորգ եպիսկոպոսներէ առ իրեարս ուղղեալ՝ Յակոբ վարդապետին համար տեղի ունեցած դէպքին առթիւ։

Վարդապետք այս թղթակցութեանց մէջ Ներսէս Սրբազանի դրած սա խօսքը՝ թէ «դուք ժողովուրդին համար աշխատելէ փախչելու նպատակաւ զամենայն ճանապարհ բարի կը համարիք»՝ իրենց խոր տհաճութեան և ցաւոյ առարկայ ըրեր են, որովհետև կրսեն, անսահման, և մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող ամենէն խիստ խօսքն է, և տրամաբանութեան և խորհրդածութեան պարզ կանոնով հանուած եզրակացութիւն կը համարի զայն Ներսէս եպիսկոպոս. Բ-ոդ. եր. 79։

Մենք կը կարծենք՝ թէ այս խօսքը Վարդապետաց համար ցաւոյ այնչափ արժանի խօսք մը չէ, որչափ ցաւալի է Գէորգ Սրբազանին և չորս վարդապետաց* առ Նորին Սրբազնութիւնն ուղղած գրերնուն մէջ քանի մը անգամ կրկնած սա խօսքը՝ թէ «թէ ես ինքնս և թէ ան վարդապետք՝

*. Այս գիրը և որոշումը մենք վարդապետներուն ալ ընծայեցինք, որովհետև թէ՛ և յիրաւի անունք մեղադրած են Գէորգ եպիսկոպոսը այս գրոյն խստութեան համար, բայց անոր իր գրոյն մէջ զիրենք ալ սա առաջադրութեան ընկեր առնելուն դէմ չբողոքելնէն զատ, գործադրութեան մասին ալ՝ մինչև անոր կենաց վախճանը վիճակին եկեղեցեաց մէջ և ո՛չ մէկերնին վեղար փիլոն չառին, միայն անգամ մը Խորէն վարդապետը Աստուածաբուս սուրբ Կարապետի եկեղեցին եկաւ, բայց ան ալ դարձեալ վեղար, փիլոն չառաւ, միայն չալիկ հագնելով պատարագին ներկայութիւն ըրաւ։

որ հաւատարիմ մնացած են իրենց կրօնական պարտուց, ըստիպուած ենք ոչ վերար և ոչ փիլոն հաղնիլ և ոչ եկեղեցական պաշտօն վարել Ձեր Սրբազնութեան առաջնորդական սահմանին եկեղեցեաց մէջ» . Ղ-ՐԼ. երես. 56. 61։ Ապացուցանենք ։

Ի՞նչ էր Գէորգ Սրբազանին և վարդապետաց չարժառիթը՝ ուրկէ անունը այս առաջադրութիւնը ընել ստիպուած կը տեսնեն ինքզինքին. —այն՝ թէ Ներսէս Սրբազան իրենց աղդարար նամակն ընդունելուն պէս Յակոբ վարդապետը Նիկոմիդիոյ վիճակին բոլոր եկեղեցեաց մէջէն չէ մերժեր* ։ Բայց միթէ զայն բնաւ չմերժե՞լ կը նշանակեր Նորին Սրբազնութեան իրենց դրոյն տուած սա պատասխանին իմաստը՝ թէ «դիրդ կարդալէս անմիջապէս յետոյ Ա.տաբազար իրեն (Յակոբ վարդապետին) գրեցի, որ եկնէ Ձեր Գերապատուութեան դիմէ իբրև իր Ա.ռաջնորդին, և Ձեր Ներողամտութիւնը խնդրէ, յաւելլով՝ Ինձմա թէ դուք ալ իբրեւ

*. Գէորգ Սրբազան իր առաջին գրոյն մէջ մեզ «անդգամ» կոչելով կինդրէ գեր. Ա.ռաջնորդէն՝ որ յանդիմանէ մեզ պաշտաննիս չարաչար գործած երնուս համար։ Մենք պաշտաննիս չարաչար գործածած և յանդիմանութեան արժանի անատենը կը լլլայինք, երբոր Յակոբ վարդապետին կանոնական արգելքի տակ գրուած ըլլալուն կամ իրմէն, և կամ որ աւելի օրինաւորն է՝ Ա.ռաջնորդ Հօրմէն պաշտօնապէս տեղեկութիւն ստացած ըլլայինք. քանի որ ասոնք եղած չէին, ի՞նչ օրէնքով Յակոբ վարդապետին պատարագելը մեր փոխանորդական պաշտօնին չարաչար գործածութիւն պիտի պատճառէր։ Անդգամ ալ անոր համար կոչեցիր ասոր է. ի թղթին. եր. 63, որովհետև վանքին մէջ՝ ի ներկայութեան Ներսէս Սրբազանի մատնանիշ զինքը ցոյց տալով, «աս մարդը մեզ անդգամ ըրաւ» ասեր ենք։ Թէ որ մէկուն սա կերպով «անդգամ» բառը իր անձին համար ասելէն այլոց ալ զայն անդգամ անուանել կհետևի, պէտք էր Պօղոս առաքեալն ալ, քա՛ւ լիցի, անդգամ անուանել, որովհետև ան ալ իր անձին համար կգրէ Բ կորնթ, ժա, 1. «լաւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում անդգամութեանս» . պէտք էր Գէորգ Սրբազանը զինքն ալ ապիկար կոչել ինչու որ՝ ի թուղթն, եր, 68, «կենաց երևելի և՝ ի վերայ տանեաց չըբնելու պաշտաննէրէն զգուշացած եմ, կըսէ, ո՛չ թէ անհանդստութենէ փախչելուս, այլ ապիկարութենէս զղալուս համար» ։

աշակերտ և հետևող հեզոյն Քրիստոսի պատրաստ էք ներել իրեն, որով վանացդ մէջ կը հանդչի հոգւոյն խաղաղութիւնք», թէ իրենց խնդիրը կատարելու կամք, և իր առաջնորդական սահմանին եկեղեցեաց մէջէն արտաքսելու սպառնալիք կը յայտնէր Յակոբ վարդապետին՝ թէ որ իրեն տրուած այս յորդորանաց անլսող դտնուելու ըլլար. ինչպէս որ այս թղթոյն գրութեան թուականէն երկու ամիս ետքը ժողովրդեան այցելութեան համար Ա.տափաղար գտնուած ատենը վերը ըսուած վիճակին մէջ տեսնելով զայն՝ իրօք արգիլեց իր եկեղեցիներուն մէջ վերար փիլոն հաղնելէ, մինչև ստիպուեցաւ նա Վանահօր ներողամտութիւնը խնդրելու համար վանք դիմել, թէ և Վանահայրը ոչ միայն ընդունելութեան, այլ և իր տեսոյն անդամ արժանի չէր ըրեր զայն՝ խորունկ ձմեռուան մէջ միաբանութեան թաղին ներքնը դեռնայարկ գլեճին սենեակ մը յատկացընելով անոր բնակութեան, ուր սովորաբար մահուան վկայականին առնուած հիւանդները կդրուէին։ Պէտք չէ՞ր որ Գէորգ Սրբազան և վարդապետք երկայնմտութեամբ և առանց կրից դիտէին Ա.ռաջնորդին ասընթացքը, որ գթած առաքինի մը, խոհական օրինասիրի մը և խաղաղութեան բարեսէր պաշտօնէի մը ընթացք է. ընդհակառակն իրենց խնդիրը անմիջապէս կէտ առ կէտ գործադրուած չըտեսնելնուն վրայ սրտնեղելով, միանդամայն և Ներսէս Սրբազանի առ Արօնական ժողովն Ա.տափաղարու գրած թղթոյն էրեսախոնարհութեան բառին չարաչար մեկնութիւն տալով՝ առանց անկէ անմիջապէս վերջը գրուած էպիլոկեան պարբերոյ մը ղանցած բառերուն զօրութիւնն ալ նկատելու, մտքերնին կդնեն՝ թէ իրենց խնդիրը կատարելու դժկամակ է Ա.ռաջնորդը, կաճապարեն վերոյիշեալ որոշումը ընել այսինքն՝ ՀԼՔՐԼ ԱՍՊՈՍԾՅԻՆ պարտականութ՝ որ որ եկեղեցոյ կանոնները խանգարած են եղեր, որ որ մի և նոյն բանն ընելն եղեր ՁԵՐԵՐՈՒՆ և ՆՈՒՔԼԵՐՆ. ՇԼՆԱՍԷՐ և ՆՈՒՔԼԵՐՆ. Ղ-ՐԼ. եր. 61. որոշում մը՝ որ բարոյապէս ալ նիւթապէս ալ ՀԱՍԱԿԱՐ եղաւ թէ իրենց և թէ վանքին. մինչդեռ քիչ մ՝ աւելի համբերութեամբ և ծանրադլխութեամբ ակնդէտ ի-

բաց վախճանին սպասելով՝ իրերն իրենց ուղածին պէս և երկուսոտեք կատարեալ ներդաշնակութեամբ գլուխ ելլելուն սարակոյս չկար։

Եւ սա անարդարանալի վարվարկոտութենէն զատ ի՞նչպէս կրնան նաև, իրերն իրենց երևակայած վիճակին մէջ մնացածելով իսկ, իրենց այդ առաջադրութիւնն արդարացընել Աստուծոյ, իրենց խղճին և օրինաց առջև. ո՞ր եկեղեցական կանոնէն կրնան ցցընել իրենց սա որոշման իբր մեծագոյն նախադրեալն եղող սա ընդհանուր սկզբունքը՝ թէ կանոնական արգիլման տակ եղող վարդապետ մը եկեղեցւոյ մը մէջ ինքնահրաման վեղար փիլոն հագած ատենը՝ պէտք է որ այնպիսի արգելքէ ազատ եղող վարդապետք այն եկեղեցւոյն վերաբերած առաջնորդութեան սահմանին բոլոր եկեղեցեաց մէջ վեղար և փիլոն առնելէ և աստուածային պաշտամունք կատարելէ հրաժարին. կանոնագրոց մէջ անանկ յօդուած մը նշանակուած չկայ. դալով գործադրութեան, մեր Տէրը տաճարը աւազակաց այր ընող սեղանաւորները բաւական համարեց միայն չուանեայ խարազանաւ արտաքսել այն որբավայրէն, չըսաւ անոնց՝ թէ որովհետև դուք իմ հօրս տունը, աղօթից տունը այր աւազակաց և տեղի վաճառաց ըրիք, ուստի թէ՝ ես ինքս և թէ իմ աշակերտքս ստիպուած ենք տաճար մէջ ո՛չ դալ աղօթել, և ո՛չ ժողովրդեան ուսուցանել այսուհետև. ընդհակառակն՝ ո՛չ ապաքէն անկէ ետքն ալ թէ ինքը և թէ իր աշակերտքը կհանապազորդէին երթալ աղօթել և ուսուցանել տաճարին մէջ։ Գէորգ Սրբազան և վարդապետք ալ՝ Յակոբ վարդապետին խնդիրը վերջապէս իրենց առաջարկած կանոնական իրաւացի տրամադրութեան համաձայն չկարգադրուած տեսած ատեննին՝ իրաւունք ունէին յաւիտեան բողոքելու առ որ անկն էր, չէին կրնան այնպիսի պարագայի մէջ մեր հաւատոյ Հեղինակին և սուրբ Հարց հրամանը և չկանոնադրածը իրենք գործելու ելնելով վեղար և փիլոն առնելէ հրաժարիլ Նիկոմիդիոյ վիճակին եկեղեցեաց մէջ։ Իրենց այդ որոշումը Յակոբ վարդապետին անհրաման վեղար և փիլոն առնելուն հարկաւոր հետևանքը և դարմանը չէր։

Ընդհակառակն՝ Ներսէս Սրբազանին ըսածը այսպէս անհետևական խօսք մը չէ, անոր հանած եղրակացութիւնը իր նախադրեալներէն տրամաբանօրէն կբղխի. խոստացեր են անոր վարդապետներ տալով օգնել իր առաջնորդական ծանրածանը պաշտաման մէջ, չեն տուեր կամ չեն կրցեր տալ, թերևս իրենք սա գլացման իրաւացի պատճառներն ունեցած ըլլան, բայց քանի որ սա յաճախ խոստումներէն և գլացումներէն ետեւ վերջին անգամ ալ կելլեն բոլորովին վիճակին եկեղեցեաց մէջ աստուածային պաշտամունք չկատարելու որոշում կընեն, ո՛վ ալ ըլլայ՝ որ քիչ մը տրամաբանելու և խորհրդածելու պարզ կանոններուն վարժ ըլլայ, առանց նիւթոյն որպիսութեան նայելու՝ իրարմէ ուղղապէս ելած նախադասութեանց կապակցութեամբ Ներսէս Սրբազանին հանած եղրակացութենէն զատ ուրիշ եղրակացութիւն չկրնար հանել, թէ՝ և Վանահօր և վարդապետաց միտքը սա գլացմանց և որոշման մէջ՝ հանուած եղրակացութեան հետ հանդիսութիւն չունենայ։

Անսահման է խօսքը կրսեն. իրա՛ւ անսահմանութիւն նշանակող ամենայն բառը ունի իր մէջը, բայց այդ խօսքը ըսող Սրբազանն ինք սահմանաւորած է զայն իր վերջին թղթոյն մէջ, ուր կրսէ՝ թէ «վիճակին գլխաւոր տեղերը վարդապետներ խրկելով ինձ օգնելու գործը... երևսի վրայ մնացած է, երբեմն չերամի, խոզակի, երբեմն հաչիւ, երբեմն հիւանդութեան, երբեմն ալ կռիւներու պատրուակներ հնարելով», Խոզդ. եր. 71։ Ահա ամենայն ճանապարհ բառերուն սահմանափակ իմաստը։

Գէորգ Սրբազանին խօսքն ընդհակառակն ստուգիւ անսահմանաբար ըսուած է։ Ստիպուած են թէ՝ ինքը և թէ՝ իր վարդապետք վեղար և փիլոն չհագնիլ մինչև ե՞րբ, ամի՞ս մը, տարի՞ մը, մինչև յանկե՞ա յաւիտեանս, ժամանակի սահման որոշուած չէ։ Ո՞ւր ստիպուած են վեղար և փիլոն չառնել.

չնորհենք վայրկեան մը՝ թէ Աստուածաշունչ եկեղեցեաց մէջ չառնելու իրաւունք ունէին, որոնց մէջ Յակոբ վարդապետը վեղար և փիլոն առեր էր կամ կրնար առնել. մէկալ դեղերու եկեղեցիներէ՞ն ինչ կուզէին, որ անոնց վրայ ալ անխիր կտարածեն իրենց առաջադրութիւնը, «Ձեր Սրբազնութեան առաջնորդական սահմանին եկեղեցեաց մէջ» ըսելով լայնարձակաբար։ Ասոր ալ չնորհում ընենք, և ըսենք թէ Ներսէս եպիսկոպոսի առաջնորդած բոլոր եկեղեցիներուն մէջ աստուածային պաշտամունք չկատարելու իրաւունք ունէին, հապա ան ինչ է՝ որ վանքին նորակառոյց եկեղեցւոյն օծման հանդիսին առաջիկայ գանուելու համար հրաւէրի կոնդակներ խրկեցին Նիկոմիդիոյ վիճակին բոլոր եկեղեցիներուն. միթէ ասով իրենք իրենց անձին դէմ հակասութեան և կանոնազանցութեան մէջ ինկած չեղա՞ն, քանի որ ո՛չ միայն անոնց մէջ վեղար և փիլոն չհագնելու մտադիր վիճակի մէջ, այլ նաև առանց առաջնորդական իրաւասութիւն մ'ունենալու անոնց վրայ, և կամ առանց այս իրաւասութիւնը ունեցող վիճակին Առաջնորդին կամ անոր փոխանորդին գիտութեան և թոյլտուութեան խրկեցին կոնդակները. յայտնի է որ խօսքերնիս ո՛չ թէ կոնդակ խրկելնուն, այլ կոնդակաց տուչութեան ապօրինաւոր կերպին վրայ է։ Եւ միթէ Յակոբ վարդապետին անհրաման վեղար և փիլոն առնելէն և պատարագելէն պակա՞ս կանոնազանցութիւն էր իրենց ասըրածը. թէ որ ան եկեղեցական կանոն մը ոտքի տակ առնել էր, աս ալ եկեղեցական ուրիշ կանոնի մը՝ տիեզերական և ազգային ժողովներէն այնչափ պատուիրուած կանոնի մը դէմ մեղանչել էր. թէ որ այն իր եպիսկոպոսին իշխանութիւնը արհամարհել է, աս ալ օտար վիճակի եպիսկոպոսի մը իշխանութիւնը չյարգել է։ Քա՛ջ է, թող ուրեմն իրենք Նիկոմիդիոյ վիճակին եկեղեցիներուն մէջ վեղար և փիլոն չհագնին և աստուածային պաշտամունք չվարեն, որովհետև անվեղարն և անփիլոնն վեղար և փիլոն առեր, և եկեղեցական կանոնները խանգարուեր են անոնց մէջ, մենք ալ վեղար և փիլոն

չհագնինք անոնց մէջ, որովհետև իշխանութիւն չունեցող մը իշխանաւորի գործ գործելով անոնց մէջ՝ ուրիշ եկեղեցական կանոն մը խանգարուեր է, վեղար և փիլոն ո՛վ առնելու և աստուածային պաշտամունք ո՛վ վարելու է անոնց մէջ։

Հանդերձ այսու ամենայնիւ՝ արդարութեան դէմ մեծապէս կմեղանչէ մէկը, թէ որ մտքէն անգամ անցնէ՝ թէ Սրմաշու վանքին վարդապետները վանքին մէջ անգործութեամբ նստած իրենց հանդիստը և հաճոյքը կնային. Սրմաշու վանքին վարդապետք կրնանք ըսել՝ որ ուրիշ ամեն վանքի վարդապետներէ աւելի անձնուիրաբար կաշխատին յօգուտ իրենց վանուց և ժողովրդեան, և դերապատիւ Առաջնորդ Սրբազանն ալ այսպիսի բան մը ըսած չունի. գաճաճ և հսկայ բառերը Ռուբ. եր. 79. վարդապետաց իրենց ինքնահնար բառերն են. զիրենք գաճաճ տեսնողը բնաւ իր վիճակը հովուելու չհրաւիրեր զիրենք. Առաջնորդ Սրբազանին գրած խօսքը ժողովրդեան մէջ անձամբ երլելով աշխատելու համար իրենց խոստման գործադրութեան կվերաբերի։

Փափադելի է՝ որ երկուստեք իրարու ըսուած այս խօսքերը, որոնք առօրեայ վէճի մը դժբաղդ արդիւնքն են, յաւիտենական մոռացութեան անդունդին մէջ թաղելով քրիստոնէական անյիշաչարութեամբ, ներդաշնակաւոր համաձայնութիւն մը գոյանայ այս երկու Առաջնորդական և Վանահայրական աթոռոց մէջ, որոց երկուքին բաղդը այնպէս անքակ կապուած է իրարու հետ, որ առանց մէկուն օգնութեան միւսը բարոյապէս կամ նիւթապէս տկար է, մինչդեռ Վանահայրական աթոռը վիճակը վարդապետներ խրկելով Առաջնորդութեան օգնած ատեն՝ վիճակն ալ փոխադարձաբար վանքին նիւթական նպաստներ մատակարարելով, երկուքն ալ բարւոք կառավարութեամբ օր ըստ օրէ 'ի լաւ անդր կյառաջանան, և երկու դրացի մարմնոց մէջ տարիներէ հետէ հովացած սէրը կվերակենդանանայ յօգուտ երկոցունց։ Այս է մեր ըսած համաձայնութեան կերպը, որ կարծենք օտար ալ չէ վանականաց և վիճակայնոց միանգամայն զգացածէն և շահէն։

Դ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մինչև հոս մեր հանդարտ մտօք և չափաւորութեամբ գրած ստուգապատում անցքերէն ընթերցողք քաջ խելամուտ եղան, որ մեր թէ՛ վանական ընդհանուր ժողովոյն և թէ՛ ազգային Վարչութեան ուղղած բողոքագիրներուն միակ շարժառիթն ուրիշ բան չէր, բայց եթէ Գէորգ եպիսկոպոսի վանաց տնտեսական շահուն և կանոնադրոյն հակառակ ըրած գործողութիւնները, և թէ չորս վարդապետք իրենց թղթոյն մէջ մասնաւոր դիտում ունեցած են մեր այս անվրէպ նպատակին անձնական կրից և ինքասուց գոյն տալով՝ վանահայրը իր վրայ դիզուած ամբաստանութիւններէն արդարացընել։ Եւ սակայն ո՛րչափ ողորմելի և անկայուն է կուսակցական մարդուն վիճակը. մէկ ճշմարտութիւն մը չխոստովանելու համար շարունակ ստութենէ՝ ի ստութիւն կգլորի, կեղակարծ մտօք առանց և ոչ մէկուն վրայ հաստատուն մնալ կարողըլալու, վասն զի մարդկային միտքը միայն ճշմարտութեան մէջ կարող է հանդչիլ։ Ճիշդ այս վիճակին մէջ կգտնենք չորս վարդապետներն ալ. մեր բողոքներուն մեղադրեալ նպատակ մ՚ընծայելու համար մէկ մը կըսեն մասնաւորապէս ինձ համար՝ թէ վանքին այսօրեայ անկախ դրից և անընչութեան կանոնին տհաճ ըլլալով՝ Վանահայրը թէ՛ սկզբունքով և թէ՛ գործադիր իշխանութեամբ զայն պահպանելուն համար անոր կըհակառակիմ եղեր, մէկ մը՝ որպէս թէ տղայական և անիմաստ ատելութիւն մը ծոցս դրած՝ Վանահօր դէմ եղած կարծիքներու և գրուածքներու, ի՞նչ կերպ ալ ըլլան, կստորագրեմ եղեր, մէկ մ՚ալ՝ թէ մեր ընկերաց դասէն չբաժնուելու համար, որոց խմբին զինուոր գրուեր եմ եղեր, յօժարեր եմ անոնց հետ՝ ի միասին ստորագրել Նիկոմիդիոյ Քաղաքական ժողովոյն խրկուած բողոքագիրը։

Եւ յիրաւի՛ ի՞նչպէս պիտի կրնային իրենց պատճառաբանութիւնը ասոնց մէկուն վրայ հաստատել, քանի որ անոնց և ո՛չ մէկը ճշմարտութեան կնիք մը չէր կրեր իր վրայ։ Որովհետև թէ մեք անձնական ատելութիւն մը չունէինք Վանահօր հետ, այլ մանաւանդ անոր փոխադարձ սիրոյն ալ ցանկացող էինք, յայտնած ենք վանական ժողովոյ խրկած բողոքագիրներուս մէջ, ուր ըսած ենք՝ թէ «չցուցանէ դա առիս ՝ի վաղուց հետէ զսէր, զդուրթ և զհայրական գորով». Գ-ՂՐ. ԵՐ. 5. թէ մենք մեր ընկերաց դասէն չբաժնուելու համար բողոքագրոյ ստորագրութիւն դնող չէինք, կաղաչցուցանենք մեր ընկերաց թղթոյ մէջ նշանակուած մէկ քանի գրութեանց տակ ստորագրութիւն չունենանէս. վանքին այսօրեայ անկախ դրից և անընչութեան կանոնին տհաճ չըլլալիս ալ կ՚յայտնէ կանոնադրութեան ներքեւն. եղած մեր ստորագրութիւնը, զոր առանց դժուարութեան յօժարակամ գրած ենք հոն։

Սակայն չեմք կրնար հանդուրժել այն անհեթեթ ստութեանց, որովք այդ չորս վարդապետք մեզ ժողովոյդ և Ազգին առջեւ անպատուելու և պարտաւորելու անբարի խորհրդով իրենց թուղթը լեցընել խիղճ չեն բրեր. և ահա ներկայ գրուիս առաջի Աստուծոյ և պատկառելի ժողովոյդ կբողոքեմ

Ա. Թղթոյ 76 երեսին մէջ ինձ համար գրուած վերոյշեալ դրպարտութեան դէմ՝ թէ վանքին այսօրեայ անկախ դրից տհաճ, և անընչութեան կանոնին դժգոհ ըլլալով՝ գաղտնի և յայտնի ջանքեր կընեմ եղեր այս դիրքը խախտելու համար, որպէս զի պայմանն ալ ոչնչանայ. թող հաստատեն այդ դրպարտող վարդապետք վանքին անկախ դրից տհաճ՝ և անընչութեան կանոնին դժգոհ ըլլալս, և թէ ո՞րոնք են իմ գաղտնի և յայտնի ջանքերս այդ դիրքը խախտելու համար։

Բ. Կբողոքեմ Յակոբ վարդապետի դիչեր ատեն քանի մը Արմաշցիներով մէկ կտեղ վանքէն դուրս ելլելու անցքին առթիւ գրած սա ստութիւններնուն դէմ, թէ՝ այսպէս խորհեր

են, այսպէս կարդաւորեր են անշուշտ ծածուկ դրերով եւ դիւղայիք Աստուածաղաղ դացած աստենը անձամբ խրատելով Պօղոս եւ Սաւուլ վարդապետք. «Բ՝ Թ՝. եր. 48. Նոյնպէս Թղթոյ 50 երեսին մէջ սա դրածնուն դէմ՝ թէ՝ երկու դիր կ՝ օրինեն, մէկը յանուն ընդհանուր Սրմաչացւոց, եւ յանուն դիւղացւոց ամանց կատարդրեն առանց անանց դիանալուն, դիր մ՝ալ յանուն երից բանտարկեալց կպատրաստեն», եւ որ դիկի. Պէտք է այս գործողութիւններուն եւ դիրերուն, եթէ իրաւք կան, ո՛չ միայն գործակցութիւն, այլ եւ տեղեկութիւն անդամ ունեցած ըլլալս ապացուցանեն զօրաւոր փաստերով։

/ Գ. Զեռքերս կուրծքիս վրայ դրած կրողքեմ ամենայն ղօրութեամբ հոգելոյս Սաւուլն վարդապետի առ Յակոբ վարդապետն դրած Թղթոյն, որ կտեսնուի՝ Բ՝ Թ՝. եր. 51—53. դիս խորհրդակից ցցընելնուն դէմ, մինչդեռ ամենափոքր տեղեկութիւն մ՝անդամ չունէի ես ոչ այն դիրը դրուելուն եւ ոչ անոր պարունակած իմաստին, ինչպէս որ ան մինչեւ իմ՝ի կէյլէ գանուիլս ալ, որ նոյն Թղթոյն մէջ յայտնի կտեսնուի, ըստ ինքեան հաստատապէս կվկայէ։ Կրողքեմ նոյնպէս Թղթոյ 18 երեսին մէջ Գէորգ եպիսկոպոսին նամակին սա ամենածանր խօսքերուն դէմ՝ որ կրսէ մեզ համար թէ «զամենայն դչարութեան մասամբք վաղուս եւս ելեր եւ զանցուցեր յահաբին եղեռն անլսեր թշնամանաց անձինս»։ դրուածքը թէ՝ եւ հոգելոյս Սրբազանինն է, բայց թուղթը հրատարակող չորս վարդապետք պաշտպանութեան ձեւով հրատարակած այս նամակնուն մէջ նշանակեալ ահագին եղեռան եւ ամեն կերպ չարութեան ի՛նչ ըլլալը արդարեւոն Աստեանց առջեւ հաստատութեամբ ցցընելէ չեն կրնար խուսափել։

Ի՝ վերջոյ կրողքեմ Թղթոյ 24. 41. 42. 43. 76 երեսներուն մէջ այլ եւ այլ ծանր սկնարկութիւններով չորս վարդապետաց իմ՝ անձիս վրայօք դրած սեւ եւ անիսիրեմ դրպարտութիւններուն դէմ։

Գալով վանաց ներկայ նիւթական եւ բարոյական վիճա-

կին, զոր բաղդատութեամբ անցեալ ժամանակներու աւելի զարդացեալ վիճակի մէջ կգտնեն վարդապետք, ո՛հ, մենք ալ կփափաքինք՝ի սրտէ՝ որ այնպէս եղած ըլլար, եւ Թղթոյ 80 երրորդ երեսին մէջ այս մասին ամեն նշանակուածներն անհակառակելի ստուգութիւն մ՝ունենային, բայց ի՛նչ օգուտ անցեալին վրայ խօսելէ, եղածն եղած է, թող այսուհետեւ ներկայ վանահայր Խորէն եպիսկոպոս եւ իր միաբանակիցք ջանան իրական եւ հաստատուն յառաջադիմութեան եւնախանձելի բարեկարգութեան մէջ դնել վանքը եւ միաբանութիւնը, ժամանակիս բանուկ դաղափարին համեմատ չուղղելով վանաց դպրոցին աշակերտելոց վախճանը եւ դաստիարակութեան ոճը, այլ ինչպէս որ վանքերու հաստատութեան վաղեմի նպատակը, եւ Աղգին եւ եկեղեցւոյն ճշմարիտ պէտքը կպահանջեն, առաւել քան զառաւել կրթելով ժառանգաւոր աշակերտները կրօնական ուսմանց, Աւետարանի բարոյական սկզբանց, եւ կրից եւ հաճոյից մեռելութեան կրթութեանց մէջ, առանց որոց եկեղեցական մը բարի եւ օգտակար եկեղեցական, ընտիր միաբան, եւ Աստուծոյ եւ եկեղեցւոյ փառաց նախանձախնդիր վարդապետ չկրնար ըլլալ։

Այս է ահա, Սրբազան Տէ՛ր, եւ Հա՛ր եւ Տեա՛ր, մեր դիտողութիւնը ան վարդապետաց դրպարտուիլ դրուած-քին վրայ, զոր կվերջայնենք հոս՝ ո՛չ թէ ան վարդապետներուն պէս խնդրելով՝ի վերջոյ՝ որ պարդապէս զպուլն կեդրոնական Վարչութեանդ միջոցաւ, այլ մեր միակ խնդիրն է խորամուխ քննութեամբ մը երեւան հանել անմեղութիւնը եւ յանցաւորը, ուր ակներեւ պիտի տեսնուի՝ թէ որչափ աւելորդ եւ անիրաւ է սա ինքզինքնին խաղաղասէր անուանող վարդապետաց Վարչութեանդ ըրած առաջարկութիւնը. Բ՝. Եր. 81. որ մեզ /րենց խաղաղասէր խմբին հեռու բռնէք, թէ՝ եւ իրենց ծեր խաղաղասէր խոյքին մէջ սուէ+ ըսող չկար. եւ այն իրենց առաջարկութիւնն ալ վայրապար թուղթ մրոտող առաջարկութիւններու կարդը դասուեցաւ։ Վասն որոյ կխնդրեմք ազգային պատասխանի Աստեանցդ՝ որպէս զի այդ Վարչութեանդ ուղղեալ թուղ-

թը տորադրող Միքայէլ, Մեսրովպ, Խորէն եւ Ներսէս վարդապետներուն մեր վրայ բարդած վերոյիշեալ զրպարտութիւնները նկատողութեան առնելով՝ մանրախոյզ քննութեամբ դատէք զմեզ այն վարդապետներուն հետ, որպէսզի անով ասդէպքերուն մէջ յանցաւորը եւ անյանցը պաշտօնապէս և հրապարակաւ 'ի յայտ գալով՝ հասարակաց տարապարտ և յանդէպ դայթակղեալ միտքերը բուժին։

Մնամ ամենապատիւ Սրբազնութեանդ եւ արդարակորով Ատենիդ եւ Աղդին

1873. հոկտեմբեր. 15. Խոնարհ ծառայ

'Ի Կ. Պոլիս։ Պողոս վարդապետ

Խօլտամեանց

ՎՐԻՊԱԿ

Երես	Սխալ	Ուղիղ
9	ապաչխարհանք	ապաշխարանք
10	ապաչխարհանք	ապաշխարանք
»	դորհրդաւոր	խորհրդաւոր
16	թէ յոդուածին	Ի՛ յոդուածին
»	իրաւասութեամբ	իրաւասութեան
»	դժբաղթաբար	դժբաղդաբար
»	տարիուկէս տարուան	մէկուկէս տարուան,
17	չէր, այն	չէր այն,
»	աւելի էր	անկ էր
»	համար ալ	համար
18	խաղալիկ, ըլլալու	խաղալիկ ըլլալու
»	մեքենայուած,	մեքենայուած
19	արձանագրութեան	արձանագրութիւն
21	պէտք են անոր	անոր
»	'ի ժամուն՝ վանքէն	'ի ժամուն. — վանքէն
23	ինչպէս.Ցթղթոյերեսին	ինչպէսթղթոյՑ երեսին
»	ըլլա՛յ թէ որ	ըլլայ. թէ որ
28	ամնօրեայ	ամնօրեայ
32	'ի քաւութեան	'ի քաւութիւն
40	մոածել	մոածել։
46	ընդ. ինքեան	ըստ ինքեան

Ф. U.
№ 7150

Ф. Ц.
№ 7150